Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Գիշերային թռիչք

Օդանավի ներքևում, բլուրների ստվերներն արդեն ակոսում

էին վրա հասնող երեկոյի ոսկին։ Դաշտերը սկսում էին լուսավորվել անսպառ լույսով. այս երկրում նրանք շռայլում են իրենց ոսկին այնպես, ինչպես արտացոլում են իրենց ձյունափայլ սպիտակությունը՝ ձմեռը վերջանալուց հետո էլ։

Եվ օդաչու Ֆաբիենը, որ ծայրագույն Հարավից Պատագոնիայի փոստը դեպի Բուենոս-Այրես էր տեղափոխում, երեկոյի մոտենալը զգում էր միևնույն նշաններից, ինչպես զգում են նավահանգստի ջրերը. հանդարտությունից, թեթև ծալքերից, որ հազիվ գծագրում էին խաղաղ ամպերը։ Ֆաբիենը մուտք էր գործում անծայրածիր և օրհնված նավակայան։

Այս խաղաղության մեջ նրան սկսում էր թվալ, թե ինքը կատարում է մի հանգիստ զբոսանք, ինչպես հովիվը։ Պատագոնիայի հովիվները անշտապ շրջում են մի հոտից մյուսը. Ֆաբիենը առանց շտապելու գնում է մի քաղաքից մյուսը, նա այդ փոքր քաղաքների հովիվն էր։ Երկու ժամը մեկ նա հանդիպում էր ոչխարների, որոնք գալիս էին ջուր խմելու գետերի ափին կամ արածում հարթավայրում։

Երբեմն ծովից ավելի անմարդաբնակ հարյուրավոր կիլոմետրերով ձգվող տափաստանից հետո նա հանդիպում էր կորած մի ագարակի, որը կարծես, տափաստանների ալիքների միջով լողում էր դեպի նա՝ կրելով մարդկային կյանքերի իր բեռը. այն ժամանակ Ֆաբիենը օդանավի թևերով ողջունում էր այդ նավը։

«Երևում է Սան-Ժյուլիանը. տասը րոպեից վայրէջք կկատարենք»։

Բորտռադիստը հաղորդում էր լուրը գծի վրա գտնվող բոլոր ռադիոկայաններին։

Երկու հազար հինգհարյուր կիլոմետրի վրա, Մագելլանի նեղուցից մինչև Բուենոս-Այրես իրար ետևից ձգվում են միատեսակ հանգրվաններ, բայց այս մեկը գտնվում էր գիշերվա սահմանագծի վրա, ինչպես Աֆրիկայում վերջին հնազանդեցված ավանը գտնվում է անհայտի սահմանագծի վրա։

Ռադիստը մի գրություն տվեց օդաչուին։

«Մեր շուրջը ամպրոպն այնքան սաստիկ է, որ լիցքապարպումները լցնում են իմ ականջակալները: Գիշերելո՞ւ ենք Սան-Ժյուլիանում»:

Ֆաբիենը ժպտաց. Երկինքը հանդարտ էր ինչպես ակվարիումի ջուրը, և իրենց առաջ գտնվող բոլոր օդանավակայանները նշում էին. « Պարզ երկինք, առանց քամու»:

Նա պատասխանեց.

«Կշարունակենք»:

Իսկ ռադիստը մտածում էր, որ ամպրոպները թաքնվել են ինչ-որ տեղ, ինչպես որդերը՝ մրգի մեջ:

Գիշերը գեղեցիկ էր լինելու, և սակայն, ինչ-որ տեղ սկսել էր փչանալ, և նա խորշում էր մտնել նեխումը թաքցնող այդ խավարի մեջ:

Դանդաղեցնելով ընթացքը և իջնելով Սան-Ժյուլիանի վրա, Ֆաբիենը հոգնած զգաց: Այն ամենը, ինչ հաճելի է դարձնում մարդու կյանքը, մեծանալով՝ ընդառաջ էր գալիս. Տները, փոքրիկ սրճարանները, ծառուղիները: Նա նման էր նվաճողի, որը իր հաղթանակների երեկոյին նայում է իր կայսրությանը միացված երկրներին և հայտնաբերում մարդկանց համեստ երջանկությունը: Ֆաբիենը կարիք էր զգում ցած նետելու իր զենքերը, զգալու իր մարմնի ծանրությունը և վշտերը, մարդ հարուստ է նաև վշտերով, և լինելու այստեղ մի սովորական մարդ, որ պատուհանից նայում է անշարժ տեսարանին: Նա կընտրի այդ փոքրիկ գյուղը, իսկ ընտրելուց հետո մարդ գոհանում է նրա կյանքի պայմաններով և կարողանում է սիրել այն: Կյանքն այնտեղ սահմանափակում է քեզ, ինչպես սերը: Ֆաբիենը կցանկանար երկար ապրել այստեղ, հավիտենականությունից վերցնել իր բաժինը, որովհետև փոքրիկ քաղաքները, որտեղ նա կանգ էր առնում մի ժամով, և հին պատերով եզերված պարտեզները, որոնց միջով անցնում էր, նրան թվում էին հավիտենական և անտարբեր իր գոյության նկատմամբ: Իսկ գյուղը դիմավորում էր անձնակազմը և բացում գիրկը: Ֆաբիենը մտածում էր բարեկամության, քնքուշ աղջիկների, սպիտակ սփռոցի շուրջը տիրող մտերմության մասին, այն բոլորի մասին, որ դանդաղորեն և հավիտենապես ընտելացնում են մարդուն: Իսկ գյուղն արդեն հոսում էր օդանավի թևերի տակ՝ ցուցադրելով գաղտնիքները իր փակ պարտեզների, որոնց այլևս չէին պաշտպանում պատերը: Սակայն Ֆաբիենը հասկացավ, որ տեսել էր միայն մի քանի մարդկանց շարժումները, իրենց պատկանող քարերի մեջ: Այս գյուղը անշարժությամբ էր միայն պաշտպանում իր կրքերի գաղտնիքը, մերժում իր փայփայանքը, նրան տիրելու համար անհրաժեշտ էր հրաժարվել գործունեությունից:

Տասը րոպե տևող դադարից հետո, Ֆաբիենը շարունակեց ճանապարհը:

Նա ետ նայեց Սան-Ժյուլիանի կողմը. Դա մի բուռ լույս էր, ապա մի բուռ աստղ, ապա փոշի, որը վերջին անգամ փորձեց գայթակղեցնել նրան:

«Թվատախտակները այլևս չեմ տեսնում. լույսը վառում եմ»:

Ֆաբիենը միացրեց լույսերը, բայց խցիկի կարմիր լապտերից արձակված լույսը, լուծվելով կապտավուն շողերի մեջ, չկարողացավ լուսավորել սլաքները: Նա սահեցրեց ձեռքը լամպի առջևով, մատները հազիվ գունավորվեցին:

«Դեռ շատ վաղ է»:

Սակայն գիշերը սև ծխի նման բարձրանում և լցնում էր հովիտները: Նրանք դաշտավայրերի հետ միասին կազմում էին հարթ տարածություններ: Գյուղերն արդեն սկսում էին լուսավորվել, և նրանց համաստեղծություններն արձագանքում էին իրար: Ֆաբիենը ևս, վառելով-հանգցնելով ճակատային կրակները, պատասխանում էր գյուղերին: Ամբողջ երկիրը ծածկված էր լուսավոր կանչերով, յուրաքանչյուր տուն, դեմքը դարձրած դեպի անհուն գիշերը, վառում էր իր աստղը, ինչպես փարոսն է դարձնում իր լույսը դեպի ծովը:

Մարդկային կյանքը ամենուրեք ծածկված էր արդեն առկայծող կրակներով: Ֆաբիենը հիանում էր, որ այս անգամ իր մուտքը գիշերվա մեջ այնքան հանդարտ է ու գեղեցիկ, ինչպես նավերի մուտքը նավակայան:

Օդաչուն նայեց սարքավորումների սլաքներին, որոնց վրայի ֆոսֆորը սկսել էր փայլել: Նա մեկը մյուսի ետևից ստուգեց ցուցմունքները և գոհ մնաց: Ֆաբիենը գտավ, որ ինքն ամուր նստած է երկնքում: Մատը հպեց պողպատյա լոնժերոնին և զգաց, որ կյանքը հոսում է մետաղի մեջ: Մետաղը չէր թրթռում, այլ ապրում էր: Մոտորի հինգ հարյուր ձիու ուժը նյութի մեջ ծնում էր մի մեղմ հոսանք, որը մետաղի սառնությունը փոխակերպում էր թավշյա մարմնի: Օդաչուն թռիչքի ժամանակ մի անգամ ևս զգում էր ոչ թե գլխապտույտ, ոչ թե արբեցում, այլ կենդանի մարմնի խորհրդավոր աշխատանքը:

Այժմ նա իր համար վերստին ստեղծել էր մի աշխարհ, ուր ճանապարհ էր հարթում ավելի հանգիստ տեղավորվելու համար:

Նա թխթխկացրեց էլեկտրական բաշխիչի տախտակը, մեկ առ մեկ ստուգեց միացումները, մի քիչ շարժվեց, հենվեց ավելի հարմար, փնտրելով ամենալավ դիրքը,

զգալու համար հինգ հարյուր տոննա մետաղի տատանումները, որն իր վրա կրում էր երերուն գիշերը։ Ապա շոշափեց և տեղը դրեց պահեստային լամպը, բաց թողեց այն, նորից վերցրեց, համոզվեց, որ նա չի սահի, նորից բաց թողեց, թխթխկացրեց յուրաքանչյուր բռնակ՝ համոզվելու, որ ձեռքը հաստատապես միանգամից կհասցնի նրանց, վարժեցնելով մատները կույրերի թագավորության մեջ գործելուն։ Ապա, երբ մատները վարժվեցին, նա իրեն թույլ տվեց վառել լամպը, զարդարելով խցիկը ճշգրիտ գործիքներով, այժմ միայն թվատախտակներին հսկելով նա կարող է հետևել, թե ինչպես ինքը խորասուզվում է գիշերվա մեջ։ Ապա, քանի որ ոչինչ չէր երերում, թրթռում, դողդողում և քանի որ իր գիրոսկոպը, ալտիմետրը և մոտորի աշխատանքը մնում էին հաստատուն, ճմլկոտվեց մի քիչ, հենվեց աթոռի կաշվե թիկնակին և ընկղմվեց թռիչքի վերաբերյալ խոհերի մեջ, ուր մարդ վայելում է անբացատրելի հույսի քաղցրությունը։

Եվ հիմա, ուշ գիշերվա այս ժամին, անքուն պահակի նման նա հայտնաբերում է, որ գիշերը բացահայտում է մարդուն, գիշերվա կոչերը, լույսերը, մտահոգությունները։ Այն հասարակ աստղը խավարի մեջ մեկուսացած տուն է։ Մյուսը, որ հանգավ, տուն է, որ ամփոփում է սեր… կամ թախիծ։ Դա մի տուն է, որ դադարում է ազդանշաններ ուղարկել մնացած աշխարհին։

Նստած լամպի լույսի տակ, արմունկները սեղանին հենած գյուղացիները իրենք էլ չգիտեն, թե ինչ հույսեր են փայփայում։ Նրանք չգիտեն, որ իրենց ցանկությունները շրջապատող խավարի մեջ հասնում են այնքան հեռուները։ Սակայն Ֆաբիենը հայտնաբերում է դրանք, երբ վերադառնալով հազար կիլոմետր հեռվից, զգում է, որ խորություններից եկող կոհակները բարձրացնում, իջեցնում են օդանավը, որի մեջ խփում է կյանքի զարկերակը, երբ անցնելով տասը ամպրոպների միջով, ինչպես պատերազմող երկրների, այդ ամպրոպների միջև ընկած լուսնի լույսի բացատներով, հաղթողի զգացումով հասնում է իրար հաջորդող այդ լույսերին։ Այդ մարդիկ կարծում են, որ լամպը լուսավորում է միայն իրենց համեստ սեղանը, սակայն այդ լույսը անցնելով ութսուն կիլոմետր, հասնում է ուրիշներին, ինչպես ամայի կղզու ծովափին հուսահատորեն ճոճվող լույսի կանչը։

II

Պատագոնիայից, Չիլիից և Պարագվայից երեք փոստատար օդանավեր հարավից, արևմուտքից և հյուսիսից վերադառնում էին Բուենոս-Այրես։ Այնտեղ սպասում էին

նրանց բեռներին, որպեսզի տեղափոխեն Եվրոպա մեկնող օդանավը, որը օդ էր բարձրանալու մոտավորապես կեսգիշերին։

Երեք օդաչուներ, գիշերվա մեջ կորսված, մտածում էին իրենց թռիչքի մասին և փոթորկալի կամ խաղաղ երկնքից դանդաղորեն դեպի հսկա քաղաքն էին իջնելու, ինչպես գյուղացիներն են իջնում իրենց լեռներից։

Ռիվիերը՝ ամբողջ օդային հաղորդակցությունների ցանցի պատասխանատուն, ետ ու առաջ էր քայլում Բուենոս-Այրեսի օդանավակայանի վայրէջքի հրապարակում։ Նա լուռ էր, որովհետև նրա համար մինչև երեք օդանավերի տեղ հասնելը օրը շարունակում էր մնալ սպառնալից։ Ռոպե առ ռոպե նորանոր հեռագրեր ստանալով, Ռիվիերը գիտակցում էր, որ ճակատագրից խլում էր մի բան, որ անհայտից մի բան պակասում էր և որ գիշերվա միջից դուրս քաշելով, օդանավերի անձնակազմերին ափ էր հասցնում։

Մի բանվոր մոտեցավ Ռիվիերին, հաղորդելու ստացված հեռագիրը.

— Չիլիից եկող օդանավը հայտնում է, որ նշմարում է

Բուենոս-Այրեսի լույսերը։

-Լավ...

Շուտով Ռիվիերը կլսի օդանավի հոնդյունը, գիշերը արդեն նրան էր հանձնում մի ինքնաթիռ, ինչպես գաղտնիքներով լի ծովը մակընթացությամբ և տեղատվությամբ ափին է հանձնում գանձը, որն այնքան երկար ժամանակ օրորել է։ Իսկ քիչ հետո գիշերը կհանձնի մյուս երկու օդանավերը ևս։ Այն ժամանակ այս օրը վերջացած կարելի է համարել։ Այն ժամանակ հոգնած անձնակազմները կգնան քնելու, և նրանց կհերթափոխեն նորերը։ Բայց Ռիվիերը չէր հանգստանալու։ Այս անգամ եվրոպական փոստը կմտահոգի նրան։ Եվ այսպես կլինի միշտ։ Միշտ։ Առաջին անգամն էր, որ այս ծեր մարտիկը զարմանքով իրեն հոգնած էր զգում։ Օդանավերի ժամանումը երբեք չի բերի այն հաղթանակը, որ վերջ է տալիս պատերազմին և բաց անում օրհնված խաղաղության մի դարաշրջան։ Նրա համար դա կլիներ միայն ևս մի քայլ, որը նախորդում է հազարավոր այդպիսի քայլերի։ Ռիվիերին թվում էր, որ լարված թևերով երկար ժամանակից ի վեր շատ ծանր բեռ էր բարձրացնում, անհույս և հանգստի հույս չունենալով, «Ծերանում եմ...»։ Նա ըստ երևույթին ծերանում էր, եթե միայն գործունեության մեջ չէր գտնում իր սնունդը։ նա զարմացավ, որ իրեն անհանգստացնում են այնպիսի հարցեր, որոնց մասին նախկինում երբեք չէր մտածել։

Եվ սակայն թախծալի մրմունջով նրան ընդառաջ էր գալիս քնքշությունների զանգվածը, որը նա միշտ հեռացրել էր իրենից, մի կորսված օվկիանոս, «Այդ բոլորը, ուրեմն, այնքան մոտի՞կ են..»: Նա նկատեց, որ աստիճանաբար դեպի ծերություն էր մղել «երբ ժամանակ գտնեմ» միտքը, այն բոլոր մտքերը, որոնք քաղցրացնում են մարդկանց կյանքը: Կարծես մարդը կարող էր ժամանակ գտնել մի օր, կարծես կյանքի վերջում կարող էր ձեռք բերել այդ օրհնված խաղաղությունը, որ մարդ երազում է: Բայց խաղաղություն չկա: Չկա և հաղթանակ: Բոլոր փոստերը միաժամանակ տեղ չեն հասնում:

Ռիվիերը կանգ առավ Լերուի՝ ծեր վարպետի առաջ, որն աշխատում էր: Լերուն ևս քառասուն տարի էր, ինչ աշխատում էր: Եվ աշխատանքը խլում էր նրա բոլոր ուժերը: Երբ Լերուն տուն էր վերադառնում երեկոյան ժամը տասի մոտերքը կամ կեսգիշերին, նրան ուրիշ աշխարհ չէր, որ դիմավորում էր, և ոչ էլ փախուստ էր այդ: Ռիվիերը ժպտաց այդ մարդուն, որ բարձրացնելով կոպիտ դեմքը, ցույց էր տալիս կապտավուն սոնին. «Շատ էր ամրացված, թուլացրի»: Ռիվիերը հակվեց սոնու վրա. Այժմ դարձյալ նրան սկսեցին զբաղեցնել աշխատանքային հոգսերը: «Պետք է ասել, որ արհեստանոցում այս մասերը ավելի ազատ հագցնեն»: Մատով շոշափեց քերծվածքները, ապա նորից ուշադիր նայեց Լերուին. դիտելով նրա կնճռոտ, խիստ դեմքը, մի տարօրինակ հարց եկավ Ռիվիերի լեզվի ծայրը, որից նա ժպտաց:

— Լե՛րու, ձեր կյանքում սերը ձեզնից շա՞տ ժամանակ է խլել:

— Օ՛հ, սերը, գիտեք, պարոն դիրեկտոր...

— Դուք էլ ինձ նման, երբեք ժամանակ չեք ունեցել:

— Ոչ այնքան շատ...

Ռիվիերը լսում էր ձայնի հնչյունը, փորձելով իմանալ, թե արդյո՞ք պատասխանի մեջ թախիծ կա: Թախիծ չկար: Անցած կյանքի համար այս մարդը հանդարտ գոհունակություն էր զգում, ինչպես հյուսնը, որ գեղեցիկ տախտակը հղկել վերջացնելուց հետո ասում է. «Ահա և բոլորը: Վերջացավ»:

«Ահա և բոլորը,— մտածում էր Ռիվիերը,— իմ կյանքն էլ վերջացավ»:

Նա ետ մղեց բոլոր տխուր մտքերը, որոնք իր հոգնության արդյունքն էին, և ուղղվեց դեպի անգար. արդեն լսվում էր Չիլիից եկող օդանավի հոնդյունը:

III

Մոտորի հեռավոր աղմուկը դառնում էր հետզհետե ավելի որոշ: Նա հասունանում էր: Վառեցին վայրէջքի կրակները: Գիշերային լուսավորության կարմիր լապտերները ուրվագծեցին անգարը, հեռագրասյուները, քառակուսի դաշտը: Կարծես տոնակատարության էին նախապատրաստվում:

— Ահա՛ այն:

Օդանավն արդեն առաջանում էր դեպի լուսարձակներից հորդող լույսի խուրձը: Ինքնաթիռն այնքան փայլուն էր, որ թվում էր, թե նոր է: Նա վերջապես կանգ առավ անգարի առաջ, և մինչ մեխանիկներն ու բանվորները շտապում էին դատարկել փոստային ծանրոցները, օդաչու Պելրենը չէր շարժվում:

— է՛, ինչի՞ եք սպասում, իջե՛ք:

Օդաչուն, որ զբաղված էր ինչ-որ խորհրդավոր աշխատանքով, չբարեհաճեց պատասխանել: Հավանաբար նա դեռևս ականջ էր դնում թռիչքի աղմուկին, որով լցված էր ինքը: նա դանդաղ գլուխն էր շարժում և առաջ թեքված, ինչ-որ բան էր շոշափում: Վերջապես դարձավ դեպի պետերն ու ընկերները, դիտեց նրանց մտախոհ, ինչպես մարդ դիտում է իր սեփականությունը: Կարծես նրանց հաշվում էր, չափում, կշռում և մտածում, որ ինքն ազնվորեն վաստակեք է այդ բոլորը՝ տոնական տեսք ունեցող այս անգարը, ամուր ցեմենտը, իսկ ավելի հեռվում՝ քաղաքն իր եռուզեռով, իր կանանցով և իր ջերմությամբ: Նա իր լայն ափերում էր պահում այս մարդկանց, ինչպես իր ենթականերին, քանի որ կարող էր շոշափել, լսել և հայհոյել նրանց: Սկզբում մտածեց հայհոյել նրանց, որ այստեղ հանգիստ են, իրենց կյանքի ապահովության համար վստահ, և կանգնած հիանում են լուսնով, բայց նա բարեսիրտ էր.

— ...Խմիչքը ձեր հաշվին է:

Եվ նա ցած իջավ օդանավից:

Նա ցանկացավ պատմել իր ճանապարհորդությունը.

- Եթե միայն իմանայիք...

Անկասկած մտածելով, որ բավականին բան է ասել, նա սկսեց հանել իր կաշվե կուրտկան:

Երբ մեքենան օդաչուին տարավ Բուենոս-Այրես՝ մռայլ տեսչի ու լուռ Ռիվիերի ընկերակցությամբ, նրան պատեց թախիծը, հրաշալի է գործը գլուխ բերել և ողջ-առողջ ոտքը գետին դնելով, բաց թողնել պատկերավոր հայհոյանքներ։ Ինչ հսկայական ուրախություն։ Բայց հետո, երբ հիշում ես գլխովդ անցածը, կասկածում ես՝ ինքդ էլ չգիտես ինչից։

Ցիկլոնի դեմ պայքարը, համենայն դեպս, իրական է, անկեղծ։ Բայց ուրիշ բան է իրերի դեմքը, այն դեմքը, որ նրանք ստանում են, երբ իրենց մենակ են կարծում։ Նա մտածում էր. «Սա շատ նման է ապստամբության, երբ դեմքերը հազիվ են գունատվում, մինչդեռ ամեն ինչ շրջակայքում այնքան է փոխվում»։

Պելրենը աշխատեց վերհիշել ապրումները։

Նա հանդարտ անցնում էր Անդյան Կորդիլիերների վրայով։ Այստեղ ձյունները ճնշում էին իրենց ամբողջ խաղաղությամբ։ Ձմեռային ձյունները խաղաղություն էին տարածել այս լեռնազանգվածների մեջ, ինչպես դարերն են տարածում մեռյալ ամրոցներում։ Երկու հարյուր կիլոմետր տարածության վրա ոչ մի մարդ, կյանքի ոչ մի շունչ, ոչ մի շարժում։ Միայն լեռնազանգվածների ուղղահայաց անկյուններ, որոնք բարձրանում են վեց հազար մետր, միայն քարե թիկնոցներ, որոնք ուղղաձիգ իջնում են ցած, միայն սպառնալից անդորրություն շուրջը։

Այդ տեղի ունեցավ Տուպունգատո գագաթի մոտակայքում…

Նա մտածեց։ Այո, հենց այնտեղ էր, որ նա ականատես եղավ հրաշքի։

Սկզբում նա ոչինչ չէր տեսնում, բայց իրեն անհանգիստ էր զգում այն մարդու նման, որն իրեն մենակ է կարծում, բայց տեսնում է, որ մենակ չէ, որ իրեն նայող կա։

Պելրենը ևս, շատ ուշ և առանց լավ հասկանալու զգացել էր, որ օղակվում է զայրույթով։ Ահա և բոլորը։ Որտեղի՞ց էր գալիս այդ զայրույթը։

Եվ ինչի՞ց օդաչուն գուշակեց, որ զայրույթը բխում է և՛ քարերից, և՛ ձյունից։ Որովհետև թվում էր, թե ոչինչ չէր կատարվում շուրջը, վերահաս փոթորկի ոչ մի նշան չէր երևում։ Բայց նույն տեղում մի աշխարհ էր ծնվում, որն այնքան քիչ բանով էր տարբերվում նախորդից։ Սրտի անբացատրելի ճնշումով Պելրենը նայում էր այդ անբիծ գագաթներին, անկյուններին, հազիվ գորշացած ձյունե կատարներին, որոնք սակայն սկսում էին կենդանանալ, ինչպես ժողովուրդը։

Պայքարի մեջ մտած, Պելրենը ձեռքերով սեղմում էր ղեկը: Ինչ-որ անհասկանալի բան էր պատրաստվում: Նա պրկում էր մկանները ինչպես այն գազանը, որ պատրաստվում է ցատկել: Բայց շուրջը ամեն ինչ հանդարտ էր: Այո, հանդարտ, բայց ինչ տարօրինակ զորությամբ էր օժտված այդ հանդարտությունը:

Հետո ամեն ինչ սրվեց: Այդ անկյունները, գագաթները, ամեն ինչ դարձավ սուր: Օդաչուն զգում էր, որ դրանք նավի ցռուկի նման ճեղքում են սաստիկ քամին: Եվ հետո, նրան թվաց, որ դրանք ծավալվում են, պտտվում իր շուրջը ինչպես հսկա նավեր, որոնք պատրաստվում են դիրք գրավել կռվի համար: Եվ ապա օդին խառնվեց փոշին. Նա բարձրանում էր ձյուների վրայով, դանդաղորեն տատանվելով առագաստի նման: Այն ժամանակ, որպեսզի ելք գտնի, եթե անհրաժեշտ լինի նահանջել, նա ետ նայեց և սարսռաց: Հետևում ամբողջ Կորդիլիերը կարծես եռ էր գալիս:

«Կորած եմ»:

Առջևում մի գագաթից ժայթքեց ձյունը. Դա ձյունե հրաբուխ էր: Ապա մի քիչ դեպի աջ մի երկրորդ գագաթից ժայթքեց ձյունե լավա: Եվ այսպես բոլոր գագաթները մեկը մյուսի ետևից բոցավառվեցին, կարծես մի անտեսանելի ջահակիր հաջորդաբար վառելիս լիներ դրանք: Այն ժամանակ, առաջին հողմապտույտների հետ միասին, ճոճվեցին օդաչուի շուրջը գտնվող լեռները:

Սաստիկ մարտերը հետքեր չեն թողնում: Օդաչուն այլևս իր մեջ չէր գտնում հիշողություններ մեծ հողմապտույտների մասին, որոնք նրան պտտում էին: Հիշում էր միայն, որ մոլեգնորեն պայքարել էր այդ մոխրագույն կրակի լեզուների մեջ:

Նա մտածեց:

«Ցիկլոնը, դեռ ոչինչ: Կարելի է մաշկը փրկել: Իսկ մինչ այդ: Բայց սա սկիզբն է միայն»:

Նրան թվում էր, որ բյուրավոր դեմքերի մեջ նա ճանաչում էր այդ դեմքը, և սակայն արդեն մոռացել էր այն:

IV

Ռիվիերը նայում էր Պելրենին: Քսան րոպե հետո վերջինս կիջնի մեքենայից՝ հոգնած ու ծանրացած և կխառնվի ամբոխին: Նա թերևս կմտածի. «Ինչքան եմ հոգնած… ինչ զզվելի արհեստ»: Եվ իր կնոջը կխոստովանի մոտավորապես այսպիսի բան. «Այստեղ մարդ իրեն լավ է զգում, քան Անդերի վերևում»: Եվ սակայն այն ամենը, ինչ այնքան

թանկ է մարդկանց համար, գրեթե կորցրել էին իրենց արժեքը Պելրենի աչքում. Նա նոր միայն հասկացավ, ինչքան աննշան են այդ բոլորը: Նա մի քանի ժամ ապրել էր դեկորացիայի մյուս կողմում, ապրել էր առանց իմանալու, թե ինքը հնարավորություն կունենա՞ արդյոք վերստին գտնելու այս քաղաքն իր լույսերով: Կգտնի՞ արդյոք իր մարդկային թուլությունները, մանկության ձանձրալի, բայց սիրելի բարեկամներին: «Որևէ ամբոխի մեջ,— մտածում էր Ռիվիերը,– կան մարդիկ, որոնց դժվար է տարբերել մյուսներից, բայց որոնք հիանալի պատգամաբերներ են, իրենք էլ անգիտակ լինելով դրան: Միայն թե...» Ռիվիերը վախենում էր ավիացիայի որոշ երկրպագուներից: Նրանք չէին հասկանում աշխատանքի բնույթից բխող արկածախնդրության սրբազան իմաստը, նրանց բացականչությունները աղավաղում էին այդ իմաստը և նսեմացնում մարդուն: Բայց այստեղ Պելրենը պահում էր իր ամբողջ վեհությունը և պարզապես ուրիշներից ավելի լավ էր տեղյակ, թե ինչ արժե մեր աշխարհը որոշ տեսանկյան տակ դիտելիս, և մեծագույն արհամարհանքով մերժում էր հավանությունները: Ռիվիերը շնորհավորեց նրան. «Ինչպե՞ս հաջողվեց ձեզ»: Նրան դուր էր գալիս, որ Պելրենը միայն իր արհեստից էր խոսում, խոսում էր իր թռիչքի մասին, ինչպես դարբինն իր սալի մասին:

Պելրենը բացատրեց, որ սկզբում իր նահանջի ճանապարհը կտրվել էր: Նա գրեթե արդարացնում էր ինքն իրեն. «Ես ուրիշ ելք չունեի»: Բացի այդ, նա ոչինչ չէր տեսնում, ձյունը կուրացնում էր: Բայց կատաղի հոսանքները փրկեցին նրան՝ բարձրացնելով օդանավը մինչև յոթ հազար մետր: Ամբողջ ճանապարհին ես ստիպված էի թռչել գագաթներին հավասար բարձրության վրա»: Նա խոսեց նաև գիրոսկոպի մասին, որի օդանցքի տեղը պետք է փոխվեր, ձյունը փակում էր այն: «Սառույց էր կապում, հասկանո՞ւմ եք»: Հետո ուրիշ հոսանքներ գլորել էին Պելրենին մինչև երեք հազար մետր, և նա չէր հասկանում, թե ինչպես էր պատահել, որ ոչ մի բանի չի խփվել: Պարզապես նա սկսել էր թռչել հարթավայրի վրայով: «Ես հանկարծ նկատեցի այդ, երբ դուրս եկա բաց երկինք»: Վերջում Պելրենը բացատրեց, որ այդ րոպեին նա քարայրից դուրս գալու տպավորություն ունեցավ:

— Մենդոսայո՞ւմ նույնպես փոթորիկ էր:

— Ո՛չ, երբ ես վայրէջք կատարեցի, երկինքը պարզ էր, առանց քամու: Բայց փոթորիկը ինձ կրնկակոխ հետևում էր»:

Նա նկարագրեց այն, որովհետև, ասում էր նա՝ «համենայն դեպս, այդ բոլորը տարօրինակ էր»: Ցիկլոնի գագաթը կորչում էր բարձունքում, ձյունե ամպերի մեջ, իսկ ներքևի մասը սև լավայի նման գլորվում էր հարթավայրի վրայով: Քաղաքները մեկ

առ մեկ կուլ էին գնում նրան։ «Ես երբեք չեմ տեսել այսպիսի բան...»։ Այնուհետև Պելրենը լռեց ինչ-որ հիշողություններով տարված։

Ռիվիերը դարձավ դեպի տեսուչը։

— Խաղաղ օվկիանոսից էր ցիկլոնը, մեզ շատ ուշ նախազգուշացրին։ Եվ, ի միջի այլոց, այս ցիկլոնները երբեք չեն անցնում Անդերից։

- Չէր կարելի կանխատեսել, որ ցիկլոնը կարող էր շարունակել իր ընթացքը դեպի արևելք։

Տեսուչը, որ այդ բոլորից ոչինչ չէր հասկանում, հաստատեց այդ։

Տեսուչը անվճռական տեսքով շրջվեց դեպի Պելրենը. նրա ադամախնձորը շարժվեց։ Բայց նա լռեց և փոքր-ինչ մտածելուց հետո նորից սկսեց նայել ուղիղ իր առաջ, վերստին գտնելով իր մելամաղձոտ արժանապատվությունը։

Տեսուչը ման էր ածում իր մելամաղձոտությունը, ինչպես ծանրոց։ Ռիվիերի կողմից նախորդ օրը Արգենտինա կանչված լինելով ինչ-որ անորոշ գործեր կատարելու համար, նա չգիտեր ինչ անել իր խոշոր ձեռքերն ու տեսչական արժանապատվությունը։ Նա իրավունք չուներ հիանալու երևակայությամբ, ոչ էլ սրամտությամբ, նա պետք է հիանար միայն ճշտապահությամբ։ Նա իրավունք չուներ մի երկու բաժակ խմել աշխատողների հետ, ընկերներին «դու» ասել և բառախաղ անել, եթե բախտի բերումով, որը խիստ անհավանական էր, որևէ օդանավակայանում չհանդիպեր մի ուրիշ տեսչի։

«Դժվար բան է դատավոր լինելը»,— մտածում էր նա։

Ճիշտն ասած, նա չէր դատում, այլ գլուխն էր շարժում։ Նա գլուխն էր շարժում այն ամենի առաջ, որ հանդիպում էր ու չէր հասկանում, որովհետև ոչնչի մասին գաղափար չուներ։ Եվ այս շարժումը վրդովում էր անմաքուր խղճերն ու օգնում գույքի պահպանմանը։ Նա բոլորովին սիրված չէր, որովհետև տեսուչը չի ստեղծվել սիրո քաղցրությունների համար, այլ զեկուցագրեր կազմելու։ Ռոբինոն հրաժարվել էր նոր մեթոդներ, տեխնիկական խնդիրների լուծումներ առաջադրելու մտքից այն ժամանակից ի վեր, երբ Ռիվիերը գրել էր. «Տեսուչ Ռոբինոյից խնդրվում է մեզ ներկայացնել ոչ թե պոեմներ, այլ զեկուցագրեր։ Տեսուչ Ռոբինոն պարտավոր է օգտագործել իր կարողությունները անձնակազմի աշխատանքային եռանդը խթանելու համար»։ Այնուհետև նա նետվում էր մարդկային թերությունների վրա, ինչպես հանապազօրյա հացի վրա. մեխանիկի վրա, որը սիրում էր խմել,

օդանավակայանի պետի վրա, որը ուրախ գիշերներ էր լուսացնում, օդաչուի վրա, որը վայրէջքը սահուն չէր կատարել:

Նրա մասին Ռիվիերը ասում էր. «Շատ խելացի չէ, դրա համար էլ մեծ ծառայություն է մատուցում»: Ռիվիերի հաստատած կանոնադրությունն իր համար մարդկանց ճանաչելու միջոց էր, իսկ Ռոբինոյի համար՝ միայն կանոնադրության ճանաչում:

-Ռոբինո,- ասել էր նրան մի օր Ռիվիերը,- յուրաքանչյուր ուշացած թռիչքի համար պետք է զրկեք ճշտապահության համար տրվող պարգևից:

-Եթե նույնիսկ այդ պատահում է որևէ մեկի կամքից անկա՞խ, նույնիսկ մշուշի՞ դեպքում:

-Նույնիսկ մշուշի դեպքում:

Եվ Ռոբինոն յուրատեսակ հպարտություն էր զգում այդքան ուժեղ ղեկավար ունենալու համար, որը չէր վախենում նույնիսկ անարդար լինելուց: Ռոբինոն նույնպես մի քիչ վեհություն էր ստանում մարդկանց վիրավորելուց չվախեցող իշխանությունից:

-Դուք մեկնումի ազդանշանը տվեցիք ժամը վեց անց տասնհինգ րոպեին,- կրկնում էր նա օդանավակայանների պետերին,- մենք չենք կարող ձեզ պարգևատրել…

-Սակայն, պարոն Ռոբինո, ժամը հինգ անց երեսուն րոպեին տասը մետրի վրա ոչինչ չէր երևում:

-Հրահանգն այդպես է:

-Բայց, պարոն Ռոբինո, մենք չենք կարող ցրել մշուշը:

Եվ Ռոբինոն խորհրդավոր կերպարանք էր ընդունում: Նա դիրեկցիայի մի մասն էր, այս խամաճիկների մեջ միայն նա էր, որ հասկանում էր, թե պատժելով մարդկանց, կարելի է բարելավել թռիչքի տևողությունը:

-Նա ոչնչի մասին չի մտածում,- ասում էր նրա մասին Ռիվիերը,- և այդ նրան պահում է սխալ մտածելուց:

Եթե որևէ օդաչու ջարդեր մեքենան, այդ օդաչուն կորցնում էր անվթար երթևեկելու համար տրվող պարգևը:

-Իսկ եթե վթարը տեղի է ունեցել անտառի՞ վրա,-հարցրել էր Ռոբինոն:

-Թեկուզ և անտառի վրա:

Եվ Ռոբինոն ընդունեց այդ որպես վերջնական վճիռ:

-Ցավում եմ,- ներքին անսահման հրճվանքով ասում էր նա հետագայում օդաչուներին,- ցավում եմ անչափ, սակայն լավ կլիներ, որ վթարը ուրիշ տեղ կատարվեր և ոչ թե անտառի վրա:

-Բայց, պարոն Ռոբինոն, մենք չենք ընտրում տեղը:

-Հրահանգը այդպես է:

«Հրահանգը,- մտածում էր Ռիվիերը,- նման է եկեղեցական ծիսակատարությունների, որոնք թվում են անհեթեթ, բայց որոնք դաստիարակում են մարդկանց»: Ռիվիերը անտարբեր էր այն բանի նկատմամբ, թե ինքը արդա՞ր է, թե անարդար: Թերևս այս բառերը կորցրել էին իրենց իմաստը նրա համար: Փոքրիկ քաղաքներում քաղքենիներն ամբողջ երեկոն զբոսնում էին երաժշտական տաղավարի շուրջը. Ռիվիերը մտածում էր. « Իմաստ չունի արդարացի կամ անարդարացի լինել այդ մարդկանց նկատմամբ, նրանք գոյություն չունեն»: Նրա համար մարդը անարատ մեղրամոմ էր, որը պետք է մշակել: Պետք է հոգի տալ այդ նյութին, օժտել նրան կամքով: Նա չէր մտածում իր խստությամբ նրանց ստրկացնելու մասին, այլ ձգտում էր նպաստել նրանց կատարելագործմանը: Եթե յուրաքանչյուր ուշացման համար պատժում էր, անարդար գործ էր կատարում, սակայն այս ձևով նա ճշտապահության էր մղում օդանավակայանների աշխատողների կամքը, նա կերտում էր այդ կամքը: Մարդկանց թույլ չէր տալիս ուրախանալու աննպաստ եղանակի համար, ինչպես հանգստյան հրավերի, նրանց ստիպում էր անհամբեր սպասել եղանակի բացվելուն, և այդ սպասումը ներքուստ ամաչեցնում էր բոլորին մինչև ամենահետին բանվորը: Եվ նրանք օգտվում էին երկնային զրահի մեջ երևացող առաջին իսկ թերությունից. «Հյուսիսում պատուհան է բացվել, ճանապարհվենք»: Ռիվիերի շնորհիվ տասնհինգ հազար կիլոմետրի վրա փոստը ժամանակին տեղ հասցնելը դարձել էր առաջնային:

Երբեմն Ռիվիերն ասում էր.

«Այս մարդիկ երջանիկ են, որովհետև նրանք սիրում են իրենց գործը, և նրանք սիրում են այն, որովհետև ես խիստ եմ»: Կարող էր պատահել, որ նա տանջում էր մարդկանց, բայց և տալիս էր նրանց հսկայական ուրախություններ:

«Նրանց պետք է մղել դեպի լարված կյանք, մի կյանք, որն իր հետ բերի և՛ տառապանքներ, և՛ ուրախություններ. Դա է միակ իսկական կյանքը»:

Երբ մեքենան քաղաք մտավ, Ռիվիերը քշել տվեց այն ընկերության գրասենյակը և իջավ: Մենակ մնալով Պելրենի հետ՝ Ռոբինոն նայեց նրան, կամաց բաց արեց բերանը՝ ինչ-որ բան ասելու համար:

V

Այդ երեկո Ռոբինոն հոգնած էր: Պելրեն հաղթողի դիմաց նա նոր միայն հայտնաբերեց, որ իր սեփական կյանքը գորշ էր: Նա հայտնաբերեց, որ ինքը՝ Ռոբինոն, չնայած տեսչի կոչումին և իշխանությանը, ավելի պակաս արժեր, քան մեքենայի անկյունում կուչ եկած, փակ աչքերով և յուղոտած ձեռքերով հոգնությունից ջարդված այս մարդը: Առաջին անգամ լինելով Ռոբինոն հիանում էր և պահանջ էր զգում արտահայտելու այդ: Իսկ ավելի շատ բարեկամություն ձեռք բերելու պահանջ էր զգում: Նա հոգնած էր իր ճանապարհորդություններից և օրվա ձախորդություններից, նույնիսկ զգում էր, որ մի քիչ ծիծաղելի է: Այդ երեկո վառելիքի պահեստը ստուգելուց շփոթվել էր հաշիվներում, և պաշտոնյան, որին ցանկանում էր հանկարծակիի բերել, խղճահարվելով, նրա փոխարեն վերջացրեց հաշվումները: Դեռ ավելին, նա քննադատել էր Բ 6 տիպի յուղի պոմպի տեղադրումը, շփոթելով այն Բ 4 տիպի պոմպի հետ, իսկ խորամանկ մեխանիկները նրան թույլ էին տվել ամբողջ քսան րոպե նշանակել «տգիտությունը, որը ոչնչով չի կարելի արդարացնել». Իր սեփական տգիտությունը:

Նա վախենում էր նաև հյուրանոցում ունեցած իր սենյակից: Թուլուզից մինչև Բունեոս-Այրես, աշխատանքից հետո անփոփոխ կերպով նա գնում էր այնտեղ: Գաղտնիքների գիտակցությամբ ծանրաբեռնված նա փակվում էր իր համարում, ճամպրուկից դուրս էր հանում մի ծրար թուղթ, դանդաղ գրում «Զեկուցագիր» և մի քանի տող գրելուց հետո պատռում թուղթը: Նա շատ էր ցանկանում փրկել ընկերությունը մի մեծ վտանգից: Սակայն ոչ մի վտանգ չէր սպառնում նրան: Մինչև այժմ Ռոբինոն փրկել էր միայն օդանավի ժանգոտած պտուտակի մի անուր: Մռայլ տեսքով Ռոբինոն դանդաղ պտտեցրել էր մատը այդ ժանգի վրա՝ օդանավակայանի պետի առաջ, որը նրան ասել էր. «Դիմեցեք նախորդ հանգրվանին, այս օդանավը հենց նոր եկավ այնտեղից»: Ռոբինոն սկսում էր կասկածել իր դերի կարևորությանը:

Նա Պելրենի հետ մտերմանալու փորձ արեց:

-Չէի՞ք ցանկանա ինձ հետ ճաշել: Խոսելու կարիք եմ զգում: Իմ պաշտոնը երբեմն ծանր է…

Ապա օդաչուի աչքին ավելի չնսեմանալու համար, ուղղեց իրեն.

-Ինձ վրա այնքան մեծ պատասխանատվություն է ընկել:

Ստորադրյալները բոլորովին չէին սիրում Ռոբինոյին խառնել իրենց անձնական կյանքին: Յուրաքանչյուրը մտածում էր որ նա դեռ ոչինչ չի գտել իր զեկուցագրի համար, ինձ կուտի, քանի որ շատ սոված է:

Բայց այս երեկո Ռոբինոն մտածում էր միայն իր դժբախտությունների մասին. Նա վարակված էր անհանգստացնող զգացումով և կցանկանար պատմել իր այդ միակ իսկական գաղտնիքը, որպեսզի խղճան իրեն. հպարտության մեջ ոչ մի մխիթարանք չգտնելով, նա փնտրում էր այն հեզության մեջ: Ֆրանսիայում նա սիրուհի ուներ: Վերադառնալով, գիշերները նրան պատմում էր իր կատարած ստուգումների մասին նրան շլացնելու և իրեն մի քիչ սիրել տալու համար. Գիտեր, որ նա իրեն չի սիրում, և այսօր Ռոբինոն կարիք էր զգում նրա մասին խոսելու:

-Ուրեմն կճաշե՞ք ինձ հետ:

Պելրենը, մեծահոգին, ընդունեց հրավերը:

VI

Երբ Ռիվիերը ներս մտավ Բունեոս-Այրեսի գրասենյակը, քարտուղարները նիրհում էին սեղանների առաջ: Վերարկուն հագին և գլխարկը գլխին, նա, ինչպես միշտ, նման էր հավիտենական հանապարհորդի: Նրա կարճ հասակը այնքան քիչ տեղ էր գրավում, նրա ալեխառն մազերը և հասարակ զգեստները այնքան էին հարմարվում ամեն տեսակ միջավայրի, որ նա գրեթե աննշմարելի էր դառնում: Եվ սակայն մարդկանց համակեց աշխուժություն: Քարտուղարները շարժվեցին, գրասենյակի պետը շտապ կերպով սկսեց պրպտել նոր ստացված թղթերը, գրամեքենաները չխկչխկացին:

Հեռախոսավարը միացրեց սարքավորումը և սկսեց գրանցել հեռագրերը մի հաստ գրքում:

Ռիվիերը նստեց և կարդաց:

Չիլիից եկող օդանավը դիմացել էր փորձության, նա կրկին անգամ կարդում էր այդ բարեհաջող օրվա պատմությունը, երբ իրերը իրենք են դասավորվում, երբ օդանավակայանները իրար ետևից ուղարկում են լուրեր, որոնք օրվա ընթացքում տարած հաղթանակների մասին համառոտ տեղեկագրեր են: Պատագոնիայի փաստն էլ էր արագորեն մոտենում. Որոշված ժամանակից շուտ էր հասնում, որովհետև քամիները հարավից դեպի հյուսիս էին քշում իրենց համընթաց ալիքը:

-Տվեք օդերևութաբանական կայանի հեռագրերը:

Յուրաքանչյուր օդանավակայան գովում էր իր պայծառ եղանակը, թափանցիկ երկինքը, բարենպաստ քամին: Ոսկյա երեկո էր իջել ամբողջ Ամերիկայի վրա: Ռիվիերը հրճվում էր գործերի ընթացքով: Այժմ փոստային օդանավը պայքարում է գիշերվա մեջ ինչ-որ տեղ, սակայն ունի հաղթելու բոլոր հնարավորությունները:

Ռիվիերը դեն հրեց տետրը:

-Լավ:

Եվ նա, գիշերային պահապանը, որ հսկում էր աշխարհի կեսի վրա, դուրս եկավ մի հայացք նետելու, թե ինչպես են աշխատում մարդիկ:

Ռիվիերը կանգ առավ բաց պատուհանի առաջ և ըմբռնեց գիշերը, որը ընդարձակ կամարի նման պարփակում էր Բունեոս-Այրեսը և ամբողջ Ամերիկան: Մեծության այս զգացումը չզարմացրեց նրան. Չիլիական Սանտյագոյի երկինքը անծանոթ երկինք է, բայց հենց որ փոստը ճանապարհ է ընկնում դեպի չիլիական Սանտյագո, գծի մի ծայրից մյուսը, մարդիկ ապրում են միևնույն բարձր կամարի տակ: Պատագոնիայի ձկնորսները տեսնում էին մյուս փոստային օդանավի եզրային կրակների փայլերը, այն օդանավի, որի ձայնին անհամբեր սպասում էին ռադիստների ականջները: Թռիչքի մեջ գտնվող օդանավի մոտորի հռնդյունի պատճառած մտահոգությունը ոչ միայն Ռիվիերին էր ճնշում, այլև մայրաքաղաքներին և գավառական փաքրիկ քաղաքներին:

Ուրախանալով, որ երկինքը հստակ է, Ռիվիերը հիշում էր խառնափնթոր գիշերներ, երբ իրեն թվում էր, թե օդանավը վտանգի մեջ է, և նրան օգնության հասնելը այնքան դժվար: Բունեոս-Այրեսի ռադիոկայանը հետևում էր օդանավի տրտունջներին, որոնց խառնվում էր փոթորկի աղմուկը: Այս խուլ թաղանթի տակ կորչում էր երաժշտական ալիքների ոսկե հնչյունը: Ինչքա՜ն տագնապ կա կույր նետի նման դեպի գիշերային խոչընդոտները արձակված ինքնաթիռի մեղմ երգի մեջ:

Ռիվիերը մտածեց, որ գիշերային հերթապահության ժամանակ տեսչի տեղը գրասենյակն է։

— Կանչեցե՛ք Ռոբինոյին։

Այդ միջոցին Ռոբինոն աշխատում էր շահել օդաչուի բարեկամությունը։ Հյուրանոցում նրա առաջ բաց էր արել իր ճամպրուկը, որտեղ երևում էին աննշան իրեր, որոնցով տեսուչները մոտենում են մյուս մարդկանց, մի քանի անճաշակ շապիկներ, արդուզարդի պիտույքներ, նիհար կնոջ նկար, որը տեսուչը կախել էր պատից։ Այսպես, Ռոբինոն Պելրենին համեստորեն խոստովանում էր իր կարիքները, սիրային զգացումները և ափսոսանքները։ Խղճուկ կերպով շարելով իր գանձերը, նա իր ողորմելիությունն էր ցուցադրում օդաչուի առաջ։ Իր բարոյական էկզեման։ Նա ցույց էր տալիս իր բանտը։

Բայց Ռոբինոյի համար, ինչպես բոլոր մարդկանց համար, կյանքում գոյություն ուներ մի փոքր լույս։ Մեծ քնքշությամբ նա ճամպրուկի խորքից դուրս բերեց խնամքով փաթաթված մի փոքր տոպրակ։ Նա երկար ժամանակ թփթփացնում էր այն, առանց խոսելու, հետո վերջապես բացեց ձեռքերը,

«Ես այս բերել եմ Սահարայից …»։

Այսպիսի մի գաղտնիք հայտնելու համարձակության համար տեսուչը կարմրեց մինչև ականջները։ Հուսախաբություններից, ապերջանիկ ամուսնությունից, այս կյանքի գորշությունից նա մխիթարվում էր այդ փոքրիկ սև խճաքարերով, որոնք նրա առաջ բացում էին գաղտնիքների աշխարհի դուռը։

Ավելի ևս կարմրելով նա ավելացրեց։

— Սրանցից կարելի է գտնել նաև Բրազիլիայում։

Պելրենը թփթփացրեց տեսչի ուսը, որ հակվել էր իր Ատլանտիդայի վրա։

Ամոթխածությունից էր նաև, որ Պելրենը հարցրեց.

— Սիրո՞ւմ եք երկրաբանությունը։

— Դա իմ կիրքն է։

Իր ամբողջ կյանքում միայն քարերն էին նրա նկատմամբ մեղմ եղել։

Երբ Ռոբինոյին կանչեցին, նա տխրեց, բայց վերստին գտավ իր վեհությունը։

- Ես պետք է բաժանվեմ ձեզնից, պարոն Ռիվիերը ինձ կանչում է մի քանի կարևոր գործերի համար:

Երբ Ռոբինոն գրասենյակ մտավ, Ռիվիերը արդեն մոռացել էր նրա մասին, նա մտածում էր կանգնած՝ պատից կախված քարտեզի առաջ, որի վրա կարմիրով նշված էր ընկերության օդային երթուղիների ցանցը: Տեսուչը սպասում էր նրա հրամաններին: Լռության երկար րոպեներից հետո Ռիվիերը, առանց գլուխը դարձնելու, նրան հարցրեց.

- Ի՞նչ է ձեր կարծիքը այս քարտեզի մասին, Ռոբինո:

Սթափվելով երազանքներից երբեմն Ռիվիերը այսպիսի ռեբուսներ էր առաջադրում:

— Այդ քարտեզը, պարոն դիրեկտոր...

Ճիշտն ասած, այդ մասին նա ոչինչ չէր մտածում, բայց խիստ տեսքով աչքերը հառեց քարտեզին, նա տեսչական զննության էր ենթարկում Եվրոպան և Ամերիկան: Մինչդեռ Ռիվիերը առանց հաղորդակից դարձնելու նրան իր մտքերին, շարունակում էր խորհրդածել: «Այս ցանցի դեմքը գեղեցիկ է, բայց դաժան, նա մեզնից խլեց շատ մարդիկ՝ երիտասարդ մարդիկ: Նա պատկառանք է ներշնչում կառուցվածքի իր վեհությամբ: Բայց դեռ որքան խնդիրներ է առաջադրում մեզ»: Սակայն Ռիվիերի համար նպատակը առաջնային է եղել:

Ռոբինոն, նրա կողքին կանգնած, աչքերը իր առջև քարտեզին սևեռած, կամաց-կամաց ուշքի էր գալիս: Նա ոչ մի կարեկցություն չէր սպասում Ռիվիերից:

Մի անգամ նա փորձել էր շարժել նրա գութը, պատմելով իր կյանքը ձախողող անհեթեթ հիվանդության մասին, բայց Ռիվիերը նրան պատասխանել էր. «Եթե այն ձեզ արգելում է քնել, ապա դա կխթանի ձեր ակտիվությունը»:

Սա կիսով չափ միայն կատակ էր: Ռիվիերը սովորություն ուներ ասելու. «Եթե երաժշտի անքնությունը նրան հնարավորություն է տալիս ստեղծել հիանալի գործեր, դա սքանչելի անքնություն է»: Մի օր ցույց տալով Լերուին, նա ասաց. «Նայեցեք սրան, ինչքան հրաշալի է այս տգեղությունը, որը ետ է մղում սերը...», Այն բոլորի համար, որ Լերոլի մեջ վեհ էր, նա թերևս պարտական էր իր ոչ շնորհալի արտաքինին, որը ստիպել էր նրան կյանքը նվիրել իր արհեստին:

— Դուք շա՞տ մոտ եք Պեչրենի հետ:

— Հը՛մ...

Ես ձեզ չեմ մեղադրում։

Ռիվիերը շրջվեց և գլուխը կախած սկսեց մանր քայլերով շրջել, իր ետևից տանելով Ռոբինոյին։ Նրա շրթունքների վրա գծագրվեց մի տխուր ժպիտ, որի նշանակությունը Ռոբինոն չհասկացավ։

— Միայն... միայն իմացեք, որ դուք պետ եք։

— Այո,— ասաց Ռոբինոն։

Ռիվիերը մտածեց, որ ահա այսպես ամեն գիշեր երկնքում սկիզբ է առնում մի գործողություն, ինչպես մի դրամա։ Մարդկանց կամքի թուլացումը կարող է իր հետ բերել պարտություն, իսկ մինչև արևածագ անհրաժեշտ է դեռևս երկար պայքարել։

— Դուք պետք է մնաք ձեր դերի մեջ։

Ռիվիերը կշռադատում էր իր խոսքերը։

— Թերևս վաղը գիշեր դուք հրամայեք այդ օդաչուին կատարել մի վտանգավոր թռիչք։ Նա պետք է հնազանդի։

— Այո։

— Դուք գրեթե տնօրինում եք մարդկանց կյանքը, և այդ մարդիկ ձեզնից ավելի արժեքավոր են…

Նա կարծես տատանվեց։

— Այո, այդ շատ կարևոր է։

Շարունակելով քայլել մանր քայլերով, Ռիվիերը լռեց մի քանի վայրկյան։

— Եթե նրանք բարեկամությունից դրդված ենթարկվում են ձեզ, նշանակում է, դուք խաբում եք նրանց։ Դուք ինքներդ իրավունք չունեք ոչ մի զոհողություն պահանջելու։

— Ոչ... իհարկե։

— Եվ, եթե նրանք կարծում են, որ ձեր բարեկամությունը նրանց կազատի որոշ դժվար աշխատանքներից, դուք դարձյալ խաբում եք նրանց։ Անհրաժեշտ է, որ նրանք ձեզ ենթարկվեն միշտ։ Նստեցեք այստեղ։

Ռիվիերը մեղմորեն հրեց Ռոբինոյին դեպի իր գրասեղանը։

Ես ստիպված եմ ձեզ հիշեցնել ձեր դիրքը, Ռոբինոն:

Եթե դուք հոգնած եք, այդ մարդիկ չեն, որ ձեզ պետք է զորավիգ կանգնեն: Դուք պետ եք: Ձեր թողությունը ծիծաղելի է, Գրեցե՛ք:

- Ես...

- Գրեցե՛ք, «Տեսուչ Ռոբինոն նկատողություն է անում

օդաչու Պելրենին այսինչ զանցանքի համար...»: Դուք ինքներդ գտեք որևէ զանցանք:

- Պարո՛ն դիրեկտոր:

- Կատարեցեք այնպես, որպես թե հասկանում եք, Ռոբինոն: Սիրեցեք նրանց, որոնց հրամայում եք, առանց նրանց ասելու այդ մասին:

Դարձյալ Ռոբինոն մեծ եռանդով մաքրել կտա պտուտակի անուրը:

Գծի վրա գտնվող մի օդանավակայանից հաղորդեցին. «Մի օդանավ է երևում: Օդանավը ազդանշան է տալիս. «Մոտորի աշխատանքը թուլանում է, վայրէջք եմ կատարում»:

Հավանաբար կես ժամ կկորչի: Ռիվիերը զգաց այն գրգռվածությունը, որն առաջանում է կիսաճանապարհին ճեպընթացի անսպասելի կանգառի դեպքում, երբ բոպենները սահում են, չտալով իրենց բաժինը հարթավայրերին: Այժմ ժամացույցի մեծ սլաքը գծում է մեռյալ տարածություն: Իսկ այնքան դեպքեր կարող էին տեղավորվել կարկինի այս բացվածքի մեջ: Որպեսզի չզգա սպասման բոպենների ծանրությունը, Ռիվիերը դուրս եկավ գրասենյակից, և գիշերը նրան թվաց դատարկ ինչպես թատրոնն առանց դերասանի: «Իզուր է կորչում այսպիսի գիշերը»: Նա պատուհանից չարությամբ նայում էր պարզ, աստղազարդ երկնքին, այս աստվածային ազդանշանային կրակներին, այս լուսնին և տեսնում էր, թե ինչպիսի շռայլությամբ էր ծախսվում այդպիսի գիշերվա ոսկին:

Բայց հենց որ օդանավը պոկվեց գետնից, գիշերը Ռիվիերի համար նորից դարձավ հուզիչ և գեղեցիկ: Այդ գիշերը իր մեջ կրում էր կյանքը, որի համար էլ Ռիվիերը մտահոգվում էր:

Նա ասաց, որ հարցնեն անձնակազմին, թե ինչպիսին է եղանակը նրանց մոտ:

Անցավ տասը վայրկյան:

«Հիանալի»։

Հետո իրար հաջորդեցին մի քանի քաղաքների անուններ, որոնց վրայով անցնում էր ինքնաթիռը, և Ռիվիերի համար դրանք կռվով նվաճված քաղաքներ էին։

VII

Մի ժամ հետո, Պատագոնիայի փոստային ինքնաթիռի ռադիստին թվաց, որ ուսերից բռնած իրեն դանդաղորեն բարձրացնում են։ Նա նայեց շուրջը, ծանր ամպերը ծածկում էին աստղերը։ Հակվեց ցած, դեպի երկիրը, փնտրում էր գյուղերի կրակները, որոնք նման էին խոտերի մեջ թաքնված լուսատտիկների։ Բայց ոչինչ չէր փայլում այդ սև խոտի մեջ։

Նա տխրեց, հասկանալով, որ գիշերը դժվարին է լինելու. առաջխաղացումներով, նահանջներով նվաճված տերիտորիաները ետ տալով. նա չէր հասկանում. օդաչուի տակտիկան, նրան թվում էր, որ քիչ հետո խփվելու է գիշերվա զանգվածին, ինչպես պատի։

Այժմ առջևում հորիզոնին հավասար նա նկատում էր հազիվ նշմարելի շողք, ինչպես դարբնոցից արձակված ցոլքը։ Ռադիստը ձեռքը դրեց Ֆաբիենի ուսին, բայց վերջինս չշարժվեց։

Հեռավոր ամպրոպի առաջին հողմապտույտները գրոհում էին օդանավը։ Մետաղի մասսան դանդաղորեն բարձրացվելով, ճնշում էր ռադիստի մարմնի վրա, ապա թվում էր, որ այն չքացավ, հալվեց, և մի քանի վայրկյան ռադիստը մենակ ճոճվեց գիշերվա մեջ։ Այն ժամանակ նա երկու ձեռքով կառչեց օդանավի թևերի երկայնակի պողպատե ձողից։

Եվ քանի որ, բացի խցիկի կարմիր լույսից, նա աշխարհում ոչինչ չէր նշմարում, սարսռաց, զգալով, որ անօգնական իջնում է գիշերվա սրտի մեջ, հանքափորի փոքրիկ լապտերի պաշտպանության տակ, նա չհամարձակվեց հարցերով անհանգստացնել օդաչուին, իմանալու համար, թե ինչ է մտադիր անել և ձեռքերով սեղմելով պողպատը, առաջ թեքված դեպի Ֆաբիենը, նա նայում էր այդ մռայլ ծոծրակին։

Աղոտ լուսավորության մեջ երևում էին միայն անշարժ ուսերը։ Մարմնի մութ զանգվածը թեթևակի թեքվել էր դեպի ձախ։ Նա դեմքը դարձրել էր դեպի ամպրոպը, որի յուրաքանչյուր փայլատակում, անկասկած, ողողում էր այն։ Բայց ռադիստը չէր

տեսնում այդ դեմքը։ Բոլոր զգացումները, որոնք հաջորդում էին իրար, փոթորկին դարձրած դեմքի վրա՝ անբավականության արտահայտությունը, կամքը, զայրույթը, այն ամենը, ինչ էական էր դառնում այդ դժգույն դեմքի և այնտեղ բռնկվող փոթորկի կարճատև ցոլքերի միջև, այդ ամենը ռադիստի համար մնում էին անհասանելի։

Սակայն նա կռահում էր, թե ինչպիսի հզորություն է կուտակվում այդ մութ զանգվածի անշարժության մեջ, և նա սիրում էր այդ հզորությունը, որը հաստատորեն տանում էր դեպի ամպրոպը, բայց որը և պաշտպանում էր նրան։ Անշուշտ ղեկի վրա սեղմված այդ ձեռքերը ծանրացել էին արդեն փոթորկի վրա, ինչպես գազանի ծոծրակին, իսկ ուժեղ ուսերը մնում էին անշարժ, նրանց մեջ զգացվում էր էներգիայի մեծ պաշար։

Ռադիստը մտածեց, որ վերջ ի վերջո, օդաչուն էր պատասխանատու։ Եվ այժմ դեպի հրդեհը սլացող ձիու գավակին նստած, նա վայելում էր այն նյութականը, կշռելին, հաստատունը, որն արտահայտում էր առջևում նստած այդ մութ զանգվածը։

Ձախ կողմը մարվող-վառվող փարոսի պես թույլ մի նոր օջախ վառվեց։

Ռադիստը մի շարժում արեց Ֆաբիենի ուսին դիպչելու համար, որպեսզի նրան նախազգուշացնի, բայց տեսավ, որ օդաչուն գլուխը դանդաղ շրջեց և մի քանի րոպե դեմքը պահեց իր նոր թշնամու հանդեպ, հետո դանդաղորեն գրավեց իր նախկին դիրքը։ Ուսերը միշտ անշարժ, ծոծրակը հենած կաշվե թիկնակին։

VIII

Ռիվիերը դուրս եկավ փողոց մի քիչ շնչելու և ցրելու սրտնեղությունը, որը նորից համակել էր նրան, և նա, որ ապրում էր միայն գործողության համար, զգում էր, որ այդ դրաման փոփոխվել է և դարձել անձնական դրամա։ Նա մտածեց, որ փոքրիկ քաղաքների երաժշտական տաղավարի շուրջը պտտվող քաղքենիներն ապրում են արտաքուստ հանդարտ կյանքով, որը երբեմն իր մեջ թաքցնում է ծանր դրամաներ.հիվանդություն, սեր, մահ և..,, կարող է պատահել,.. Իր սեփական ցավը շատ բան էր սովորեցրել նրան։ «Սա նոր պատուհաններ է բաց անում»,— մտածում էր նա։

Այնուհետև, երեկոյան ժամը տասնմեկի մոտերքը իրեն ավելի լավ զգալով, քայլերը ուղղեց դեպի գրասենյակ։ Նա դանդաղորեն առաջ էր շարժվում ճեղքելով կինոթատրոնների մուտքերի առաջ անշարժ կանգնած ամբոխը։ Նա բարձրացրեց աչքերը դեպի աստղերը, որոնք փայլում էին նեղ ճանապարհի վերևում, աղոտանալով

աֆիշների լույսերից: «Այս գիշեր իմ երկու թռչող փոստային ինքնաթիռների առաջ ես պատասխանատու եմ ամբողջ երկնքի համար: Այն աստղը մի նշան է. նա փնտրում է ինձ՝ ամբոխի մեջ, նա գտնում է ինձ, ահա թե ինչու եմ ես ինձ մի քիչ օտար զգում»:

Նա հիշեց մի երաժշտական դարձվածք՝ երեկ իր բարեկամների հետ լսած սոնատի մի քանի ձայնանիշները, նրա բարեկամները չէին հասկացել երաժշտությունը. «Այս արվեստը մեզ ձանձրացնում է, ձեզ նույնպես, միայն թե դուք չեք խոստովանում այդ»:

-Կարող է պատահել,— պատասխանել էր նա:

Ինչպես այս երեկո, այն ժամանակ էլ իրեն միայնակ էր զգացել, բայց անմիջապես հասկացել էր, թե որքան է հարստացնում այդպիսի միայնությունը: Այդ երաժշտությունը նրան ինչ-որ պատգամ էր հղում, միայն նրան, իրեն շրջապատող միջակությունների մեջ: Այդ երաժշտությունը նրան հասնում էր գաղտնիքի մեղմությամբ, ինչպես նշանը, որ տալիս է աստղը: Բազմաթիվ ուսերի վրայով, նրա հետ խոսում էին միայն իրեն հասկանալի լեզվով.

Մայթի վրա Ռիվիերին հրհրում էին, նա նորից մտածեց, «Չեմ ուզում բարկանալ: Ես նման եմ հիվանդ երեխա ունեցող հոր, որ ամբոխի մեջ քայլում է մանր քայլերով, իր մեջ՝ կրելով իր տան մեծ լռությունը»:

Նա հայացքը դարձրեց մարդկանց վրա: Աշխատում էր ճանաչել նրանց, ովքեր իրենց մեջ թաքցնում էին իրենց հայտնադործումը կամ սերը, նա մտածում էր փարոսի պահապանների միայնության մասին:

Ռիվիերին դուր եկավ գրասենյակների լռությունը: Նա դանդաղ անցնում էր դրա սենյակները մեկը մյուսի ետևից, լսվում էր միայն նրա քայլերի ձայնը: Գրամեքենաները քնել էին իրենց ծածկոցների տակ: Կարգով շարված թղթապանակների վրա փակվել էին մեծ պահարանների դռները: Աշխատանքի և փորձառության տասը տարիներ: Նրան թվում էր, որ քայլում է դրամատան նկուղներում, որտեղ դարսված են անհաշիվ հարստություններ: Նա մտածում էր, որ այս մատյաններից յուրաքանչյուրի մեջ հավաքված էր ոսկուց ավելի թանկարժեք բան՝ կենդանի ուժ: Կենդանի ուժ, բայց քնած վիճակում, ինչպես ոսկին՝ դրամատներում:

Սենյակներից մեկում նա կհանդիպի միակ հերթապահ քարտուղարին: Մի մարդ աշխատում էր, որպեսզի կյանքը շարունակվի, որպեսզի կամքը շարունակվի, և

այսպես հանգրվանից հանգրվան, Թուլուղից մինչև Բուենոս-Այրես երբեք չանջատվի շղթան։

«Այդ մարդը չի էլ գիտակցում իր մեծությունը»։

Փոստային օդանավերը ինչ-որ տեղ պայքարի մեջ էին հիմա։

Գիշերային թռիչքները շարունակվում էին հիվանդության նման։ Անհրաժեշտ էր հսկել ինքնաթիռին, ինչպես հիվանդին։ Անհրաժեշտ էր օգնել այդ մարդկանց, որոնք ձեռքերով, ծնկներով, կրծքով դիմագրավում են գիշերային խավարը և որոնք ոչինչ չեն ճանաչում, ոչինչ, բացի շարժուն, անտեսանելի իրերից, որոնց միջից նրանք պետք է կուրորեն դուրս պրծնեին բազուկների ուժով, ինչպես ծովի միջից։ Ինչ սարսափելի են հնչում երբեմն խոստովանությունները... «Որպեսզի տեսնեմ ձեռքերս, լույսը վառեցի,..»։ Կարմիր լույսի տակ ձեռքերը թվում էին թավշանման, ինչպես լուսանկարչական երևակայիչի մեջ։ Ահա այն ամենը, ինչ մնում է աշխարհից, և որը պետք է փրկել։

Ռիվիերը հրեց շահագործման գրասենյակի դուռը։ Միայն մի լամպի լույսը անկյունում ստեղծում էր պայծառ տարածություն։ Միայն մի գրամեքենայի չխկոցը ինչ-որ իմաստ էր տալիս այս լռությանը, առանց լցնելու այն։ Երբեմն թրթռում էր հեռախոսի զանգը։ Հերթապահ քարտուղարը վեր էր կենում և քայլում դեպի այդ կրկնվող, համառ ու թախծոտ կանչը։ Վերցնում էր լսափողը և անորոշ մտատանջությունը հանդարտվում էր. մի շատ մեղմ խոսակցություն էր սկսվում ստվերոտ անկյունում։ Հետո մարդը անվրդով վերադառնում էր դեպի իր գրասեղանը. քունը և միայնությունը սառել էին նրա դեմքի վրա՝ քողարկելով անհայտ գաղտնիք։ Այժմ, երբ երկու փոստային ինքնաթիռներ գտնվում էին թռիչքի մեջ, ի՜նչ սպառնալիք էր բերում յուրաքանչյուր կանչ, որ գալիս էր գիշերից, դրսից։ Ռիվիերը մտածում էր հեռագրերի մասին, որոնք հասնում են լամպի լույսի տակ հավաքված ընտանիքներին, ապա այն դժբախտության մասին, որը հավիտենականության չափ երկար թվացող վայրկյանների ընթացքում մնում է որպես գաղտնիք հոր դեմքի վրա։ Միայն մի թեթև ալիք է անցնում, որն այնքան հանդարտ, այնքան հեռու է օգնության ճչի նմանվելուց։ Եվ յուրաքանչյուր անգամ հեռախոսի զանգի զուսպ հնչյունների մեջ Ռիվիերը լսում էր նրա թույլ արձագանքը։ Միայնության մեջ հերթապահը դարձել էր դանդաղկոտ՝ ինչպես երկու ալիքների մեջ գտնվող լողորդը, և երբ մարդը ստվերից գալիս էր դեպի իր լամպը, ինչպես սուզվողն է բարձրանում ջրի խորքից, յուրաքանչյուր անգամ նրա շարժումները Ռիվիերին թվում էին գաղտնիքներով ծանրաբեռնված։

-Նստեցեք, ես կմոտենամ:

Ռիվիերը վերցրեց լսափողը, լսեց տիեզերքի շշունջը:

— Խոսում է Ռիվիերը:

Թույլ աղմուկ, ապա մի ձայն:

— Ձեզ միացնում եմ ռադիոկայանին:

Նորից աղմուկ, միացվող սարքավորումների չխչխկոց,ապա մի ուրի՛շ ձայն:

- Խոսում է ռադիոկայանը: Հաղորդում ենք հեռագրեր: Ռիվիերը նշում էր դրանք և գլուխը շարժում:

— Լավ... լավ..

Էական ոչինչ: Ծառայությանը վերաբերող հեռագրեր: Ռիո դը-Ժանեյրոն պարզաբանումներ էր պահանջում, Մոնտեվիդեոն խոսում էր եղանակի մասին, իսկ Մենդոսան՝ սարքավորումների: Սրանք տան սովորական աղմուկներ էին:

— Իսկ փոստային օդանավե՞րը:

— Եղանակը ամպրոպային է: Ինքնաթիռների ձայնը չենք լսում: ,

— Լավ:

Ռիվիերը մտածեց, որ այստեղ պարզ, աստղազարդ գիշեր է, սակայն նրա մեջ ռադիստները հայտնաբերել էին ամպրոպների հեռավոր շունչը:

— Ցտեսություն:

Մինչ Ռիվիերը վեր էր կենում, քարտուղարը մոտեցավ:

— Գրություններ կան ստորագրելու, պարոն...

— Լավ:

Ռիվիերը մեծ բարեկամություն է զգում այդ մարդու նկատմամբ, որը նույնպես կրում էր գիշերվա ծանրությունը, «Մարտական այս ընկերը,– մտածում էր Ռիվիերը,– անկասկած երբեք լի էլ իմանա, թե որքան է մեզ մոտեցնում գիշերային այս հերթապահությունը»:

IX

Երբ Ռիվիերը թղթերի ծրարը ձեռքին ներս էր մտնում իր առանձնասենյակը, աջ կողմում մի սուր ցավ զգաց, որը մի քանի շաբաթից ի վեր անհանգստացնում էր նրան։

«Գործերս վատ են»։

Մի վայրկյան հենվեց պատին.

«Ինչ անհեթեթություն»։

Ապա հասավ իր բազկաթոռին։

Մի անգամ ևս զգաց, որ ծեր առյուծի նման կապկպված է, և մի խոր թախիծ համակեց նրան։

«Այնքան աշխատանք՝ հանգելու համար այս արդյունքին։ Հիսուն տարեկան եմ, հիսուն տարի ես լցրի իմ կյանքը, ձևավորեցի ինքս ինձ, պայքարեցի, դեպքերի ընթացքը փոխեցի, և ահա, ինչն է ինձ լցնում և դառնում ավելի կարևոր, քան տիեզերքը... ինչ անհեթեթություն»։

Նա սրբեց քրտինքը, սպասեց մի քիչ և, երբ հանգստացավ, սկսեց աշխատել։

Նա դանդաղ թերթում էր գրությունները։

«Բուենոս-Այրեսում 301 մոտորը քանդելիս մենք նկատեցինք... խիստ նկատողություն անել մեղավորին»։

Ստորագրեց։

«Ֆլորիանոպոլսի հանգրվանում հրահանգներին հետևած չլինելու պատճառով...»։ Ստորագրեց։

«Որպես կարգապահական միջոց մենք տեղափոխում ենք օդանավակայանի պեա Ռիիչարին, որը..,»։

Ստորագրեց։

Այնուհետև Ռիվիերը դարձավ գրեթե մաղձոտ, ինչպես կողքի թմրած, բայց չհեռացող ցավը, որը կյանքին նոր իմաստ էր տալիս և ստիպում նրան մտածել իր մասին։

«Իրավացի՞ եմ, թե ոչ: Չգիտեմ: Երբ հարվածում եմ, վթարները պակասում են: Դրանց համար մարդը չէ պատասխանատուն, այլ ինչ–որ թաքուն ուժ, որին երբեք չես հասնի, եթե բոլորին չպահես ձեռքիդ մեջ: Եթե ես շատ արդարացի լինեի, յուրաքանչյուր գիշերային թռիչք կդառնար մի հավանական մահ»:

Նա անսպասելի հոգնություն զգաց, երբ տեսավ, թե ինչպիսի դժվարությամբ է բաց արել այդ ուղին, նա մտածեց, որ կլիներ գթասրտություն ցուցաբերել: Մտորումների մեջ խորասուզված, նա շարունակում է թերթոտել դրությունները:

«...Ինչ վերաբերում է Ռոբլեին, սկսած այսօրվանից, նա այլևս մեր անձնակազմի մեջ չի մտնում»:

Նա հիշեց այդ ծեր մարդուն, և նախորդ երեկոյան նրա հետ ունեցած խոսակցությունը:

- Դաս, ի վերջո, սա մի դաս է:

– Բայց պարոն... բայց պարոն... Այդ պատահել է մի անգամ, միայն մի անգամ, մի մտածեցեք: Իսկ ես աշխատում եմ իմ ամբողջ կյանքում:

— Անհրաժեշտ է դաս տալ:

— Բայց պարոն... նայեցեք, պարոն:

Եվ նա մաշված թղթապանակից հանեց օրաթերթի հին համարը, որտեղ պատկերված էր երիտասարդ Ռոբլեն, օդանավի մոտ կանգնած:

Ռիվիերը նայում էր, թե ինչպես էին ծերունական ձեռքերը դողում երբեմնի համեստ փառքի վրա:

— 1910 թվականից է պարոն,., Այդ ես եմ հավաքել Արգենտինա մեկնող առաջին օդանավը: 1910 թվականից ես աշխատում եմ ավիացիայում: Արդեն քսան տարի է, պարոն: Ուրեմն, ինչպե՞ս կարող եք ասել... Իսկ երիտասարդները, պարոն, ինչքան են ծիծաղելու արհեստանոցում,,, Ա՜հ և ինչպես կծիծաղեն նրանք:

— Դա, դա ինձ չի վերաբերում,

— Իսկ երեխաներս, պարոն, ես երեխաներ ունեմ:

՝Ձեզ ասացի, առաջարկում եմ սնագործ բանվորի աշխատանք:

— Իսկ իմ արժանապատվությունը, պարոն, իմ արժանապատվությունը: Մտածեցեք, պարոն, քսան տարի ավիացիայում, ինձ նման մի հին բանվոր...

— Սևագործ բանվորի աշխատանք։

— Ես հրաժարվո՛ւմ եմ, պարոն, հրաժարվում եմ։

Նրա ծերունական ձեռքերը գողում են, իսկ Ռիվիերը շրշում է աչքերը չտեսնելու համար այդ խորշոմած, կոպտացած, այդ հիանալի ձեռքերը։

— Սևագործ բանվորի աշխատանք։

— Ո՛ն պարո՛ն, ո՛չ,,. Ես ուզում եմ ձեզ նորից ասել...

— Կարող եք գնալ։

Ռիվիերը մտածեց, «Նրան չէ, որ ես այսքան դաժանորեն

վտարեցի, այլ չարիքը, որի համար նա թերևս պատասխանատու չէ, բայց որի համար նա գործիք է ծառայել»։

«Որովհետև դեպքերին պետք է ուղղություն տալ, — մտաձում էր Ռիվիերը,— և նրանք կինազանդվեն, և այն ժամանակ կարելի կլինի ստեղծագործել։ Իսկ մարդիկ խղճուկ իրեր են, նրանց էլ են ստեղծում կամ մեկուսացնում, եթե փոխանցում են «չարիքը»։

«Ես ուզում եմ նորից ասել...»։ Ի՞նչ էր ուզում ասել նրան այդ խեղճ ծերունին։ Որ իրենից խլում են իր ծերության ուրախությունն՝ը։ Որ նրա համար թանկ է իր գործիքների հանած աղմուկը օդանավի մետաղի վրա, որ նրա կյանքը զրկվում է մեծ պոեզիայից և վերջապես... որ անհրաժեշտ է ապրե՞լ,

«Շատ եմ հոգնել»,— մտածում էր Ռիվիերը։ Նրա մեջ մեղմորեն բարձրանում էր ջերմությունը։ Նա մատներով թփթփացնում էր թուղթը և մտածում. «Ես շատ էի սիրում այս հին ընկերոջ դեմքը,..»։ Եվ Ռիվիերը նորից էր տեսնում այդ ձեռքերը, նա մտածում էր այն թեթև շարժման մասին, որով նրանք կարծես ցանկանում էին իրար միանալ։ Բավական էր միայն ասել, «Լավ, լավ, մնացեք»։ Ռիվիերը երևակայում էր ուրախության հոսքը, որ իջնում էր դեպի ծերունական ափերը։ Եվ այդ ուրախությունը, որն արտահայտելու է ո՛չ թե այդ դեմքը, այլ բանվորի այդ ծերունական ձեռքերը, այդ ուրախությունը նրան թվաց ամենագեղեցիկը աշխարհում։ «Պատռե՞մ այս գրությունը»։ Իսկ ծերունու ընտանիքը, երեկոյան աշխատանքից տուն վերադառնալը և այդ համեստ ուրախությունը։

-Ուրեմն, քեզ պահո՞ւմ են։

- Անշուշտ, անշուշտ, Ես եմ հավաքել Արգենտինա մեկող առաջին օդանավը։

Եվ երիտասարդները այլևս չեն ծիծաղի ծերուկի վերականգնված հեղինակության վրա...

«Պատռե՞ մ»։

Հնչեց հեռախոսի զանգը, Ռիվիերը վերցրեց լսափողը։

Լռության, դրան հաջորդեց այն հնչականությունն ու խորությունը, որ տալիս են քամին և տարածությունը մարդկային ձայներին։ Վերջապես լսվեց։

- Օդանավակայանն է։ Ո՞վ է խոսում։

— Ռիվիերը։

- Պարոն դիրեկտոր, 650-ը պատրաստվում է թռչել։

- Լավ։

— Վերջապես ամեն ինչ պատրաստ է, բայց վերջին րոպեին մենք ստիպված եղանք վերանորոգել էլեկտրական լուսավորումները, միացումները վնասված էին։

— Լավ, Ո՞վ է սարքավորել դրանք,

— Կստուգենք։ Եթե թույլ տաք, պատժիչ միջոցներ ձեռք կառնենք։ Եզրային լույսի խափանումը կարող էր լուրջ հետևանքներ ունենալ։՝

— Իհարկե։

Ռիվիերը մտածում էր. «Եթե չարիքը արմատախիլ չարվի, երբ էլ հանդիպի, ուր էլ հանդիպի, թռիչքի ժամանակ լույսը կարող է խափանվել։ Ոճիր է բաց թողնել այն, երբ պատահմամբ հանդիպում ես չարիքին և չես պայքարում նրա դեմ։ Ռոբլեն պետք է հեռանա»։

Քարտուղարը, որը ոչինչ չէր տեսնում, շարունակում էր չխկչխկացնել գրամեքենան։

՝Այդ ի՛նչ է։

- Կես ամսվա հաշիվներն են։

՝Ինչո՞ւ մինչև հիմա պատրաստ չեն։

- Ես...

- Դրան կանդրադառնանք,

«Տարօրինակ է, ինչպես են դեպքերը հաղթում, ինչպես է հայտնվում մի հսկայական մռայլ ուժ, այն նույնը, որը տակն ու վրա է անում կուսական անտառները, նույնը, որն աճում է, ընդարձակվում, ժայթքում ամենուրեք, որտեղ կատարվոլ են մեծ գործեր»։ Ռիվիերը մտածում էր այն տաճարների մա սին, որոնք ավերվում են վտիտ պատուտակների ճնշման տակ

«Մեծ գործ...»։

Համոզվելու համար նա նորից է մտածում.48

«Այս բոլոր մարդիկ... Ես սիրում եմ նրանց, նրանց դեմ չէ,որ ես պայքարում եմ։ Այլ այն չարիքի, որ գործում է նրանց միջոցով»։

Նրա սիրտը խփում էր արագ, դա նրան ցավ էր պատճառում։

«Չգիտեմ, իմ արածը լա՞վ է, թե վատ։ Չգիտեմ, ոչ մարդկային կյանքի, ոչ արդարության, ոչ էլ վշտի իսկական արժեքը։ Ես որոշակի չգիտեմ, թե ի նչ արժե մարդու ուրախությունը։ Ոչ էլ գողացող մի ձեռք։ Ոչ խղճահարության արժեքը և ոչ էլ զգվանքի...»։

Նա երազում էր.

«Կյանքում այնքան հակասություններ կան, մարդիկ մի կերպ ազատվում են նրանցից,,,։ Բայց պահպանվել, ստեղծագործել, վերափոխել անցողիկ մարմինը...»։

Ռիվիերը մի փոքր մտածելուց հետո զանգահարեց.

«Զանգահարեք, որ Եվրոպա մեկնող օդաչուն թռիչքից առաջ անցնի ինձ մոտ»։

Նա մտածում էր։

«Այս փոստատարը ևս չպետք է իզուր վերադառնա։ Եթ ես թափ. չտամ իմ մարդկանց, գիշերը միշտ կվախեցնի նրանց»։

X

Օդաչուի կինը արթնանալով հեռախոսի զանգից, նայե։ ամուսնուն և մտածեց.

«Մի քիչ էլ թող քնի»։

Նա հիանում էր այդ մերկ գոգավոր կրծքով, որ հիշեցնում էր գեղեցիկ նավ։

Ամուսինը քնած էր իր խաղաղ անկողնում, ինչպես նավակայանում և, որպեսզի ոչինչ չխանգարի նրա քունը, կինը ուղղելով ծալքը, հեռացնելով ստվերը, հարթելով ծփանքը՝ հանդարտեցնում էր անկողինը, ինչպես աստվածային մատն է խաղաղեցնում ծովը։

Կինը վեր կացավ, բաց արեց պատուհանը և դեմքին զգաց քամու շոյանքը։ Նրա աչքի առաջ փռվում էր ամբողջ Բուենոս–Այրեսը։ Հարևան տնից, որտեղ պարում էին, քամին բերում էր մեղեդու հնչյունները, հանգստի և հաճույքի ժամ էր։ Այս քաղաքը պահում էր մարդկանց իր հարյուր հազար ամրոցներում, ամեն ինչ հանդարտ էր և վստահելի։ Բայց կնոջը թրվում էր, որ հանկարծ գոչելոլ են. «Ի զե՛ն», և միայն մի մարդ, իր ամուսինը, պիտի ոտի կանգնի։ Նա դեռ քնած էր, բայց նրա քունը նման էր զինվորական պահեստայինների խռովահույզ քնին, որոնք շուտով գրոհի են նետվելու։ Նիրհած քաղաքը չի պաշտպանում այս մարդուն, երբ նա, ինչպես երիտասարդ աստված, վեր սլանա քաղաքի փոշիների միջից, նրա լույսերը օդաչուին կթվան չնչին։ Կինը նայում էր նրա ջլապինդ թևերին, որոնք մի ժամ հետո կրելու էին եվրոպական փոստի պատասխանատվությունը, ինչ-որ ավելի մեծ բանը, մի ամբողջ քաղաքի պատասխանատվությունը։ Եվ կինը տագնապ զգաց։ Միլիոնավոր մարդկանց միջից այս մարդն էր միայն նախատեսված այդ տարօրինակ զոհաբերության համար։ Կնոջը պատեց թախիծը։ Այդ մարդը կխուսափի նաև Նրա շոյանքից։ Կինը նրան խնամել էր, պահպանել, փայփայել ո՛չ թե իր, այլ այս գիշերվա համար, որը նրան խլելու էր իրենից։ Մարտերի, անձկությունների, հաղթանակների համար, որոնց մասին ինքը երբեք ոչինչ չի իմանա։ Այս փափուկ ձեռքերը ընտելացել էին, բայց կինը աղոտ պատկերացում ուներ նրանց իսկական աշխատանքի մասին։ Կնոջը ծանոթ էին այդ մարդու ժպիտը, սիրահարի նրբազգացությունը, բայց ոչ նրա աստվածային զայրույթը փոթորկի մեջ։ Կինը նրան պարուրում էր քնքշություններով, երաժշտությամբ, սիրով, ծաղիկներով, բայց յուրաքանչյուր մեկնումի ժամին, նա առանց ափսոսալու թոթափում էր իր վրայից այդ բոլորը։

Ամուսինը բաց արեց աչքերը։

— Ժամը քանի՞սն է։

— Կեսգիշեր։

-Ինչպե՞ս է եղանակը։

— Չգիտեմ։

Նա վեր կացավ, ճմլկոտվելլլվ դանդաղորեն մոտեցավ պատուհանին։

— Շատ չեմ մրսի։ Ինչպիսի՞ն է քամու ուղղությունը։

-Ինչպե՞ս կարող եմ ես իմանալ։

Նա թեքվեց պատուհանից։

Հարավային։ Հրաշալի է։ Այսպես կտևի մինչև Բրազիլիա։

Նա նկատեց լուսինը և իրեն հարուստ զգաց։

Ապա հայացքը իջեցրեց քաղաքի վրա։

Նրա համար քաղաքը ոչ քաղցր էր, ոչ լուսավոր և ոչ ջերմ։ Նա արդեն տեսնում էր քաղաքի լույսերի անօգոտ հոգսը։

-Ինչի մասին ես մտածում։

Նա մտածում էր Պորտո Ալեգրեի մոտերքում հնարավոր մշուշի մասին։

-Ես ունեմ իմ տակտիկան։ Գիտեմ, որտեղից պետք է շրջանցել։

Նա շարունակում էր նայել հակված և շնչել խոր՝ ինչպե շնչում է ծովը նետվել պատրաստվող մերկ լողորդը։

— Դու նույնիսկ տխուր էլ չես... Քանի՞ օրով ես գնում։

Ութ, տասը օր։ Ինքն էլ չգիտեր։ Տխրե՞լ, իսկ ինչո՞ւ։ Հարթավայրերը, քաղաքները, լեռները... Նա ազատագրված մեկնում էր նվաճելու դրանք։ Մտածում էր նաև, որ մի ժամ չանցած նա գրված և ետևում թողած կլինի Բուենոս-Այրեյրեսը։

Նա ժպտաց։

Այս քաղաքը...ես շատ շուտով հեռու կլինեմ նրանից։ Հաճելի է գիշերով մեկնել։ Կմիացնես գազը, դեմքդ դարձրած դեպի հարավ, և տասը վայրկյան հետո փոխվում է տեսարանը և դու թեքվում ես դեպի հյուսիս։ Քաղաքը քո ներքևում ծովի հատակի է նման։

Կինը մտածում էր այն ամենի մասին, որոնցից ամուսինը ետք է հրաժարվեր՝ նվաճելգ համար լեռները, հարթավայրերը և քաղաքները։

-Դու չե՞ս սիրում քո տունը։

- Ես սիրում եմ իմ տունը...

Սակայն կինը արդեն գիտեր, որ ամուսինը թռիչքի մեջ է։ Այդ լայն ուսերն արդեն ճեղքում էին երկնակամարը։

Կինը ցույց տվեց նրան երկինքը։

— Եղանակը լավ է, ճանապարհդ զարդարված է աստղերով։

Նա ծիծաղեց։

-՝ Այո։

Կինը ձեռքը դրեց նրա ուսին և հուզվեց, զգալով նրա մարմնի հաճելի ջերմությունը։ Ուրեմն այս մարմնին վտանգ է սպառնում։

— Դու շատ ուժեղ ես, բայց զգույշ եղիր։

— Զգույշ եմ, իհարկե։

Նա նորից ծիծաղեց։ ,

Ամուսինը սկսեց հագնվել։ Այս տոնակատարության համար նա ընտրում էր ամենակոշտ գործվածքեղենը, ամենածանր կոշիկները, նա հագնում էր գյուղացու նման։ Եվ որքան ավելի էր ծանրանում, այնքան կինն ավելի էր հիանում նրանով։ Նա հագցրեց ամուսնու գոտու ճարմանդը, օգնեց, որ հագնի կոշիկները։

— Այս կոշիկները սեղմում են ոտքերս։

— Ահա մյուսները։

— Մի ժապավեն տուր պահեստային լամպիս համար։ Կինը դիտեց նրան։ Նա ինքն էր ուղղում զրահի վերջին թերությունները, ամեն ինչ կարգին էր։

— Դու չատ գեղեցիկ ես։

Կինը նկատեց, որ նա խնամքով սանրվում էր։

— Դա աստղերի՞ համար է։

՝Ինձ ծերացած չզգալու համար է։

-Խանդում եմ։

Ամուսինը նորից ծիծաղեց և գրկեց կնոջն ու սեղմեց իր ծանր զգեստներին։ Ապա բարձրացրեց նրան ձեռքերի վրա, ինչպես փոքր աղջկան,և շարունակելով ծիծաղել, նրան պառկեցրեց նրան անկողնում ու ասաց.

-Քնիր։

Եվ դուռը փակելով իր ետևից, նա դուրս եկավ փողոց, խավարի մեջ անճանաչելի դարձած մարդկանց մեջ նա արեց նվաճման իր առաջին քայլը։

Կինն այնտեղ մնացել էր մենակ։ Տխուր նայում էր այն ծաղիկներին, գրքերին,այն ամբողջ քնքշությանը, որոնք իր ամուսնու համար այժմ միայն ծովի հատակ էին։

Գրեթե չունենալով հետևորդներ, համարյա թե դատապարտված բոլորից, նա այժմ մենակ էր մղում պայքարը։

XI

Ռիվիերը ընդումում էր նրան։

-Վերջին ճանապարհորդության ընթացքում դուք խաղ խաղացիք։ Դուք ետ դարձաք, մինչդեռ եղանակի վերաբերյալ տեղեկությունները լավ էին. դուք կարող եք անցնել։Վածենա՞ք։

Հանկարծակիի եկած օդաչուն լռում է։ Նա դանդաղորեն ձեռքերը իրար է շփում։ Ապա գլուխը բարձրացնում է և նայում ուղիղ Ռիվիերի աչքերին։

-Այո։

Հոգու խորքում Ռիվիերը խղճում է այս քաջ երիտասարդին, որ վախեցել էր: Օդաչուն փորձում է արերը չէի տեսքդարանալ:

-Ես այլևս ոչինում չէի տեսնում: Անկասկած, ավելի հեռուն…Թերևս…Ռադիոն հաղորդում էր…Բայց իմ եզրային լամպը թուլացել էր, և ես նույնիսկ իմ ձեռքերը չէի տեսնում: Ուզեցի վառել դիրքային լամպերը, գոնե թևը տեսնելու համար: Ոչինչ չտեսա: Ես ինձ զգում էի մեծ փոսի խորքում,որտեղից դժվար էր դուրս գալ: Այն ժամանակ մոտորը սկսեց թրթռալ:

-Ո՞չ:

-Ո՞չ:

-Ո՞չ: Մենք այն ստուգեցինք: Մոտորը կարգին է: Բայց երբ վախենում ես, քեզ թվում է,թե մոտորը թրթռում է:

-Ո՞վ չէր վախենա: Լեռները ճնշում էին իմ վրա: Երբ ուզեցի բարձրանալ, հանդիպեցի ուժեղ հողմապտույտների: Դուք էլ գիտեք,որ երբ ոչինչ չի երևում… Հողմապտույտները… Բարձրանալու փոխարեն ես հարյուր մետր իջա: Ես նույնիսկ չէի տեսնում գիրոսկոպը,մոնոմետրերը: Թվում էր թե մոտորը կորցնում է արագությունը,տաքանում է, յուղի ճնշումն իջնում է… Եվ այս բոլորը մթության մեջ,ինչպես հիվանդություն: Ես շատ գոհ էի կրկին տեսնելու մի լուսավորված քաղաք:

-Դուք հարուստ երևակայություն ունեք: Գնացե՛ք :

Եվ օդաչուն դուրս է գալիս:

Ռիվիերը թաղվում է բազկաթոռի մեջ և ձեռքը սահեցնում ալեխառն մազերի վրայով:

« Սա իմ մարդկանցից ամենաքաջն է : Ինչ- որ այս գիշեր նրան հաջողվեց անել, հրաշալի է, բայց ես նրան կազատեմ վախից…»:

Իսկ հետո թուլությունը փորձում է գայթակղեցնել նրան:

«Սիրվելու համար բավական է խղճահարություն ցուցաբերել: Ես չեմ խղճահարվում երբեք,կամ թաքցնում եմ այն; Կցանկանայի շրջապատված լինել բարեկամությամբ և ջերմությամբ: Բժիշկն իր արհեստի շնորհիվ հանդիպում է դրանց; Իսկ ես դեպքերին եմ ընթացք տալիս: Ես պետք էկոփեմ մարդանց,որպեսզի նրանք էլ ընթացք տան դեպքերին: Երեկոյան իմ առանձնասենյակում, ուղեթերթիկների առաջ ավելի խորն

եմ զգում այդ անհայտ օրենքը: Եթե ես ազատ թողնեմ իրենց ընթացքին,այն ժամանակ կախարդական ուժով ի հայտ կգան վթարները: Կարծես իմ կամքն է միայն,որ թույլ չի տալիս ինքնաթիռին ջարդվել և ոչ էլ թողնում,որ փոթորիկը ուշացնի նրան ճանապարհին: Երբեմն ինքս էլ եմ զարմանում իմ իշխանության վրա»:

Նա շարունակեց խորհել:

«Սա,իհարկե, հասկանալի է.ինչպես պարտիզպանի հավիտենական պայքարը մարգասեզի վրա: Նրա հասարակ ձեռքի ճնշումով նախաստեղծ անտառը ետ է մղվում հողի մեջ, որն աճեցնում էր այն ի սկզբանե»;

Նա մտածում էր օդաչուի մասին:

«Ես նրան փրկում եմ վախից; Ես հրձակվում էի ո՛չ թե նրա վրա, այլ նրա միջով անցնող այն դիմադրության, որը ջլատում է մարդկանց ուժը, երբ նրանք ընդհարվում են անհայտին: Եթե նրան լսեմ խղճամ,լրջորեն ընդունեմ նրա արկածը,նա կկարծի, որ ինքը վերադառնում է ինչ-որ խորհրդավոր երկրից ,իսկ նրան վախ պատճառողը միայն խորհրդավորությունն է: Պետք է, որ մարդիկ իջնեն մութ ջրհորը, դուրս գան և ասեն, որ այնտեղ հանելուկային ոչինչ չկա: Անհրաժեշտ է ,որ այս նույն մարդը իջնի գիշերվա սրտի ամենամութ անկյունը, մտնի նրա թանձրության մեջ, առանց հանքափորի փոքրիկ լապտերի, որը լուսավորում է միայն ձեռքերը կամ թևը, և ուսերով ետ մղի անհայտը»:

Սակայն այս պայքարում Ռիվիերին և օդաչուներին նրքուստ իրար էր կապում մի լուռ եղբայրություն: Նրանք միևնուն նավի անձնակազմն էին, նրանք ունեին հաղթելու միևնուն ցանկությունը: Սակայն Ռիվիերը հիշում էր նաև ուրիշ մարտեր, որ նա մղել էր գիշերը նվաճելու համար:

Պաշտոնական շրջաններում գիշերվա տերիտորիայից վախենում էին, ինչպես անտառի չհետազոտված թավուտից: Երկու հարյուր կիլոմետր արագությամբ արձակել անձնակազմը դեպի փոթորիկները, մշուշները և նյութական արգելքները,որ իր մեջ թաքցնում է գիշերը, նրանց թվում էր մի արկախախնդություն,որ կարելի էր հանդուրժել միայն զինվորական ավիացիային. Լուսնկա գիշերով օդ ես բարձրանում, ռմբակոծում և վերադառնում միևնուն վայէջքի հրապարակը: Բայց գիշերային կանոնավոր սպասարկությունը կձախողվի:«Մեզ համար,-պատասխանել էր Ռիվիերը,- դա կենաց և մահու հարց է, քանի որ մենք ամեն գիշեր կորցնում ենք նավերի և գնացքների նկատմամբ ցերեկով ձեռք բերած մեր առավելությունը»:

Ռիվիերը ձանձրույթով էր լսել գործի նյութական կողմի,անվտանգության և հանրային կարծիքի մասին եղած խոսակցությունը: «Հանրային կարծիքին,- պատասխանում էր նա,- պետք է ուղղություն տալ»: Նա մտածում էր. «Ինչքան անօգուտ կերպով կորած ժամանակ...Կա մի բան...Մօ բան,ու գերազանցում է այդ բոլորը: Այն, ինչ կենդանի է առաջ է գնում մի կողմ հրելով այն ամենը, ինչ հանդիպում է իր ճանապարհին, որպեսզի ապրի և ստեղծագործի, ապրի իր սեփական օրենքներով: Սա անդիմադրելի է»: Ռիվիերը չգիտեր, թե քաղաքացիական ավիացիան ե՞րբ և ինչպե՞ս կսկսի գիշերային թռիչքները,սակայն անհրաժեշտ էր համարում նախապատրաստել այդ հարցի անխուսափելի լուծումը:

Նա հիշում էր, թե ինչպես կանաչ սփռոցների առաջ նստած,կզակը բռունցքիո հենած և սեփական ուժի տարօրինակ զգացումով ինքը լսում էր բազմաթիվ առարկությունները; Նրանք թվում էին դատարկ և կյանքի կողմից դատապարտված: Ռիվիերը զգում էր, թե ինչպես իր մեջ ծանրության նման կուտակվում էր սեփական ուժը.« Իմ փաստարկումները ծանրակշիռ են , ես կհաղթեմ,- մտածում էր Ռիվիերը:- Այդպիսինն է դեպքերի բնական ընթացքը»: Երբ նրանից պահանջում էին վտանգից զերծ մնալու երախիքներ, նա պատասխանում էր .«Բոլոր օրենքները բխում են փորձից, օրենքների ճանաչողությունը երբեք չի նախորդում փորձին»:

Պայքարի մի ամբողջ տարուց հետո, Ռիվիերը հաղթեց: Մի քանիսն ասում էին.«Նա հաղթեց շնորհիվ իր հավատքի»,ուրիշներն ասում էին.«Իր հաստատակամությամբ,առաջ շարժվող արջի ուժի շնորհիվ», իսկ ըստ իրեն, այն պարզ պատճառով, որ ինքը քայլում էր ճիշտ ուղիով;

Սակայն սկզբում ինչքան նախազգուշություններ էին անհրաժեշտ: Օդանավերը մեկնում էին լուսաբացից միայն մի ժամ առաջ, վայրէջք էին կատարում մայրամուտից միայն մի ժամ հետո: Երբ Ռիվիերը ավելի վստահ դարձավ ձեռք բերածով ,այն ժամանակ միայն համարձակվեց ինքնաթիռներ ուղարկել գիշերվա խորության մեջ: Գրեթե չունենալով հետևորդներ, համարյա թե դատապարտված բոլորից, նա մղում էր պայքարը;

Ռիվիերը հնչեցնում է զանգը՝ իմանալու համար թռիչքի մեջ գտնվող օդանավերից ստացված վերջին լուրերը:

XII

Նույն միջոցին Պատագոնիայի փոստային ինքնաթիռը մոտենում էր ամպրոպին, և Ֆաբիենը հրաժարվում էր շրջանցել այն: Նա հասկանում էր, որ ամպրոպը մեծ տարածություն է գրավում, որովհետև կայծակները խրվելով շրջապատող խավարի խորքերը, հայտնաբերում էին ամպերի ամրոցներ: Նա կփորձի անցնել ամպրոպի ներքևից և միայն անհաջողության դեպքում կհամաձայնի ետ դառնալ:

Նա ալտիմետրի վրա կարդաց. հազար յոթ հարյուր մետր: Ափերով ճնշեց ղեկը, պատրաստվելով նվազեցնել բարձրությունը: Մոտորը սաստիկ թրթռաց, օդանավը սկսեց ցնցվել: Ֆաբիենը մոտավորապես ուղղեց վայրէջքի անկյունը, ապա քարտեզի վրա ստուգեց բլուրների բարձրությունը. հինգ հարյուր մետր: Որպեսզի կարողանա պահպանել տարածությունն իր և բլուրների միջև, նա որոշեց նավարկել յոթ հարյուր մետր բարձրության վրա:

Ֆաբիենը զոհաբերում էր բարձրությունը, ինչպես բախտախաղի են դնում հարստությունը:

Ընկնելով հողմապտույտների մեջ, ինքնաթիռը սուզվեք և սկսեց ավելի սաստիկ ցնցվել: Ֆաբիենը իրեն զգաց աներևույթ փլուզումների սպառնալիքի տակ: Նա երազեց, թե ինչպես վերադառնում է և վերստին գտնում բյուրավոր աստղերը, բայց ոչ մի աստիճան չշեղվեց:

Ֆաբիենը հաշվում էր իր փրկության հնարավորությունները: Կարող է պատահել, որ դա փոքր մասշտաբի ամպրոպ լինի, քանի որ Տբիլյուն՝ հաջորդ հանգրվանը, հայտնում էր, երկինքը երեք քառորդով է միայն ծածկված: Նշանակում է, որ նա ստիպված է միայն քսան րոպե մնալ այս սև բետոնի մեջ: Եվ սակայն օդաչուն խիստ մտահոգված էր երևում: Թեքված դեպի ձախ, քամուն հանդիման, Ֆաբիենը փորձում էր գտնել այն աղոտ լույսերը, որոնք սովորաբար երևում են նույնիսկ ամենաթանձր խավարի դեպքում: Բայց նա լույսի, մի նշույլ չէր տեսնում, այլ միայն տեղ-տեղ խավարի թանձրության թեթևակի նոսրացում.դա կարող էր նաև հոգնած տեսողության խաբկանք լինել;

Նա բաց արեց ռադիստի տված գրությունը.

«Ո՞րտեղ ենք մենք»:

Ֆաբիենը թանկ կվճարեր իմանալու համար այդ: Նա պատասխանեց. «Չգիտեմ: Կողմնացույցի օգնությամբ անցնում ենք ամպրոպի միջով»:

Օդաչուն կրկին հակվեց։ Նրան մտահոգում էր ելքի խողովակից արձակվող բոցը, որ մոտորից կախված էր ինչպես կրակե փունջ, սակայն այնքան դժգույն, որ լուսնի լույսը կարող էր մարել այն, բայց որը, այս անէության մեջ կլանում էր տեսանելի աշխարհը։ Ֆաբիենը տեսնում էր, թե ինչպես քամին ամուր հյուսել էր ջահի նմանվող կրակի հրեղեն լեզուները։

Գիրոսկոպը և կողմնացույցը ստուգելու համար յուրաքանչյուր երեսուն վայրկյանը մի անգամ Ֆաբիենը հակվում էր դեպի սարքավորումները։ Նա այլևս չէր համարձակվում վառել կարմիր թույլ լույսերը, որոնք երկար ժամանակ շլացնում էին նրան, բայց բոլոր սարքավորումների թվերը աստղային աղոտ լույս էին արձակում։ Այստեղ, սլաքների և թվերի մեջ, օդաչուն ապահովության խաբուսիկ զգացում էր ունենում, այնպիսին, ինչպիսին ունենում են այն նավախցիկում, որի վրայով անցնում են կոհակները։ Գիշերը և այն ամենը, ինչ նա պարունակում էր՝ ժայռեր, բեկորներ, բլուրներ, հոսում էին դեպի օդանավը նույնպիսի անսովոր անողոքությամբ։ «Որտե՛ղ ենք»՝ հարցնում էր նրան ռադիստը, Ֆաբիենը նորից բարձրանում է, վերստին թեքվում ձախ է շարունակում իր գիշերային ծանր հերթափոխությունը։ Նա այլևս չգիտեր, թե ինչքան ժամանակ, ինչքան ջանքեր էին իրեն անհրաժեշտ այս խուլ, մռայլ կապանքներից փրկվելու համար։ ։ Նա կասկածում էր, թե երբևիցե կկարողանա ազատագրվել ղրանից, որովհետև նա իր կյանքն էր դրել թղթախաղի այս փոքրիկ, կեղտոտ, ճմլված թղթի վրա, որն իր հույսերը վառ պահելու համար հազար անգամ բացել կարդացել էր. «Տրիլյուի, երկինքը երեք քառորդով ծածկված է, թույլ քամի է փչում արևմուտքից»։ Եթե Տրիլյուի երկինքը երեք քառորդով է ծածկված, ապա ամպերի պատռվածքից նա պետք է որ նշմարեր նրա լույսերը։ Միա յն թե...

Հեռվում խո ստացված այդ դժգույն լույսը նրան խրախուսում էր շարունակել ճանապարհը, սակայն կասկածը չէր հեռանում նրանից, ռադիստին մի քանի բառ խղմղեց.« Չգիտեմ, թե արդյոք կկարողանա՞մ անցնել։ Իմացիր, ետևում եղանակը դեռ լա՞վ է, թե ոչ»։

Պատասխանն ահաբեկեց նրան։

Կոմոդորոն ազդարարում է.«Այստեղ վերադառնալը անհնար է, փոթորիկ է»։

Ֆաբիենը սկսում է հասկանալ, որ փոթորիկը սկսել է անսովոր մի հարձակում Անդյան Կորդիլիերներից դեպի ծով։ Նախքան քաղաքներին հասնելը, ցիկլոնը նրանց կողողի։

«Հարցրեք Սան-Անտոնիոյի եղանակը»։

«Սան-Անտոնիոն պատասխանում է. «Քամին բարձրանում է արևմուտքից։ Փոթորիկ է արևմուտքում։ Երկինքը ամբողջովին ծածկված է»։ Արգելքների պատճառով Սան-Անտոնիոն շատ վատ է լսում։ Ես նույնպես վատ եմ լսում։ Կարծեմ փայլակների պատճառով ստիպված եմ լինելու շուտով անտենան վերցնել։ Ետ չե՞ք դառնալու։ Ի՞նչ են ձեր մտադրությունները»։

«Հանգիստ թողեք ինձ։ Հարցրեք Բահյա Բլանկայի եղանակը»։

«Բահյա Բլանկան պատասխանում է. «Քսան րոպե չանցած, արևմուտքից կանխատեսում ենք ուժեղ ամպրոպ Բահյա Բլանկայի վրա»»։

«Պահանջեցեք եղանակը Տրիլյուից»։

«Տրիլյուն պատասխանում է. « Արևմուտքից Փոթսրիկը մոտենում է վայրկյանում երեսուն մետր արագությամբ, և հորդառատ անձրև է»։

«Հաղորդեցեք Բուենոս-Այրես։ Մենք բոլոր կողմերից փակված ենք, փոթորիկը տարածվում է հազար կիլոմե տրի վրա, ոչինչ չենք տեսնում։ Ի՞նչ պետք է անենք»։

Օդաչուի համար այդ գիշերը անեզր էր. այն չէր առաջնորդում դեպի նավակայան, բոլորն էլ անմատչելի էին թվում, ոչ էլ դեպի արշալույս. վառելանյութը վերջանալու էր մի ժամ քառասուն րոպեից։ Վաղ թե ուշ նրանք ոչինչ չտեսնեչով, ընկղմվելու էին այս թանձրության մեջ։

Եթե միայն հնարավոր չիներ հասնել լուսաբացին…

Ֆաբիենը մտածում էր արշալույսի մասին, ինչպես մի ոսկեավազ ծովափի մասին, որտեղ վայրէջք կկատարեն այս ծանր գիշերից հետո։ Սպառնալիքի մեջ գտնվող օդանավի տակ սկիզբ կառնեն հարթավայրերը։ Խաղաղ երկիրը կկրի իր քնած ագարակները, իր հոտերը, իր բլուրները. Այն բոլոր անհայտ իրերը, որոնք հիմա գլորվում են մթության մեջ, կդառնան անվնաս։ Օ՜, եթե միայն կարելի լիներ, ինչպե՜ս կլողար դեպի արշալույս։

Նա մտածեց, որ օդակի մեջ է. լավ թե վատ, ամեն ինչ վճռվելու է մինչև ցայգալույս, այս խավարի մեջ։

Այդ այդպես է։ Բայց այնքան է պատահել, որ երբ բարձրացել է արևը, իրեն թվացել է, որ ապաքինվում է։

Սակայն իզուր է հիմա։ աչքերը Հառել դեպի արևելք, այնտեղ, որտեղ ապրում է արևը, իրենց և արևի միջև ընկած է գիշերային այնպիսի մի վիհ, որից դուրս գալ չի լինի երբեք։

XIII

— Ասունսիոնի փոստային ինքնաթիռը լավ է ընթանում։ Մոտավորապես ժամը երկուսին նա այստեղ կլինի։ Դրա փոխարեն նախատեսվում է Պատագոնիայի փոստատարի լուրջ ուշացում, նա կարծես դժվարության մեջ է։

— Լավ, պարոն Ռիվիեր։

—Հնարավոր է, որ մենք Եվրոպայի փոստատարը ուղարկենք առանց Պատագոնիայի ինքնաթիռին սպասելու։ Սպասեցեք մեր հրահանգներին, հենց որ Ասունսիոնից հասնի ինքնաթիռը։ Պատրաստ եղեք։

Ռիվիերը կրկին կարդաց հյուսիսային հանգրվանների օդային հեռագրերը։ Նրանք բաց էին անում Եվրոպայի փոստատարի համար մի լուսնային ճանապար. «Երկինքը մաքուր է. լիալուսին է։ Ոչ մի քամի»։ Ճառագայթող երկնքի ֆոնի վրա գծագրվում էին Բրազիլիայի լեռները, որոնք իրենց խիտ անտառների սևաթույր մազերը ուղղակի սուզում էին ծովի արծաթյա ծփանքի մեջ։ Այս անտառների վրա անձրևի նման շարունակ թափվում էին լուսնի ճառագայթները, ասաց գունավորելու նրանց։ Իսկ ծովում բեկորների նման սևին էին տալիս կղզիները։ Եվ ամբողջ ճանապարհին լուսինը մի անհատնում լույսի աղբյուր էր։

Եթե Ռիվիերը եվրոպական փոստային ինքնաթիռի անձնակազմին մեկնելու հրաման տար, օդանավը կմտներ ամբողջ գիշերը մեղմորեն փայլող մի հաստատուն աշխարհ։ Մի աշխարհ, որտեղ ոչինչ չէր սպառնում ստվերների և լույսի զանգվածների հավասարակշռությանը։ Որտեղ չէր թափանցում նույնիսկ զեփյյուռի մեղմ շոյանքը, որը եթե սաստկանա, կարող է մի քանի ժամում փչացնել ամբողջ երկինքը։

Սակայն այս փայլին նայելով, Ռիվիերը տատանվում էր ոսկեխույզի նման, որը կանգ էր առել ոսկու արգելված դաշտերի առաջ։ Հարավում տեղի ունեցող դեպքերը չէին

Արդարացնում Ռիվիերին՝ գիշերային թռիչքների միակ պաշտպանին։ Պատագոնիայում աղետի դեպքում, նրա հակառակորդները կարող են այնպես ամրապնդել իրենց բարոյական դիրքերը, որ նրանց հանդեպ թերևս Ռիվիերի

հավատն անզոր թվա: Բայց այդ չի նշանակում, թե Ռիվիերի հավատը խախտվել էր. նրա գործում ողբերգությունը կարող էր առաջանալ մի փոքր թերությունից, բայց այդ ողբերգությունը կապացուցեր մի փոքր թերության գոյությունը և ուրիշ ոչինչ: «Թերևս դիտման կայաններ են անհրաժեշտ արևմուտքում... Կմտածենք այդ մասին»: Նա շարունակեց խորհեր: «Ես միևնույն հաստատ հիմքերն ունեմ պնդելու իմ ասածը, իսկ տեղի ունեցած դժբախտությունը կրճատում է հնարավոր աղետների թիվը»: Ձախորդությունները կոփում են ում եզներին: Դժբախտաբար մարդկանց հետ այնպիսի խաղ է խաղացվում, երբ շատ քիչ է հաշվի առնվում իրերի իսկական իմաստը: Արտաքին պատճառներից շահում են կամ տարվում. հաղթանակի համար խղճուկ միավորներ են ստանում, իսկ պարտության դեպքում իրենք իրենց զգում են կաշկանդված:

Ռիվիերը հնչեցրեց զանգը:

—Բահյա Բլանկս:յի ռադիոկայանը դարձյա՞լ ոչինչ չի հաղորդում:

—Ոչ:

—Հեռախոսով կապվեցեք հանգրվանին:

Հինգ րոպե հետո նա հարցնում էր.

—Ինչո՞ ւ մեզ ոչինչ չեք հաղորդում :

—Մենք չենք լսում ինքնաթիռի ձայնը:

—Նա լռո՞ւմ է:

—Չգիտենք: Ամենուրեք փոթորիկ է. եթե նույնիսկ նա որևէ բան հաղորդում է, մենք ոչինչ չենք լսում:

—Տրիլյույն նրան լսո՞ւմ է:

—Մենք Տրիլյուն չենք լսում:

—Զանգահարեցեք:

—Փորձեցինք: Գիծը վնասված է:

—Ի՞նչ եղանակ է ձեզ մոտ:

-Սպառնալից: Արևմուտքում և հարավում կայծակներ: Շատ տոթ է::

—Քամի՞ն։

—Դեռ թույլ է, բայց դա տասը րոպե կտևի միայն։ Կայծակները արագ մոտենում են։

Լռություն։

— Բահյա Բլանկա, լսո՞ւմ եք։ Լավ։ Զանդահարեցեք տասը րոպե հետո։

Եվ Ռիվիերը սկսեց թերթել հարավային օդանավակայաններից ստացված հեռագրերը։

Բոլորն էլ հայտնում էին ինքնաթիռի լռության մասին ։ Մի բանի օդանավակայաններ այլևս չէին պատասխանում Բուենոս-Այրեսին, և քարտեզի վրա մեծանում էր լռող շրջանների բիծը, որտեղ փոքրիկ քաղաքները ենթարկվում էին արդեն ցիկլոնի վայրագ չնչին, և մութ փողոցներում գտնվող բոլոր փակ դռներն ու յուրաքանչյուր տուն աշխարհից նույնքան մեկուսացած էին և գիշերվա մեջ կորսված, ինչպես նավը։ Այգաբացը միայն կարող էր նրանց փրկել։

Սակայն քարտեզի վրա հակված, Ռիվիերը դեռ հույս ուներ հայտնաբերելու մաքուր երկնքի մի կտոր, որը կարող էր ապաստարան ծառայել օդանավերին։ Երկնքի վիճակի մասին նա հեռագրով հարցում էր արել ավելի քան երեսուն զավառական քաղաքների ոստիկանություններին, և պատասխաններն արդեն սկսել էին հասնել։ Երկու հազար կիլոմետրի վրա ընկած բոլոր ռադիոկայանները հրաման էին ստացել օդանավից մի կանչ բռնելու դեպքում, երեսուն վայրկյանի ընթացքում, այդ մասին տեղյակ պահել Բուենոս-Այրեսին, որն իր հերթին Ֆաբիենին կհաղորդեր ապաստարանի դիրքը։

Ծառայողները, որոնց կանչել էին գիշերվա ժամը մեկին, վերադարձել էին իրենց գրասենյակները։ Այստեղ անհայտ ճանապարհներով նրանք իմացել էին, որ գիշերային թռիչքները կարող է պատահել դադարեցվեն և, որ Եվրոպայի փոստատարը այսուհետև մեկնելու է միայն արշալույսին։ Նրանք ցածրաձայն խոսում էին, Ֆաբիենի մասին, ցիկլոնի մասին և առանձնապես Ռիվիերի մասին։ Նրանք շատ մոտ զգում էին այդ մարդու ներկայությունը, որին բնությունը հերքում էր իր արհավիրքներով։

Սակայն բոլոր ձայները մարեցին։ Դռան շեմին երևաց Ռիվիերը, վերարկուի մեջ սեղմված, ինչպես միշտ գլխարկը աչքերին իջեցրած, հավիտենական ճանապարհորդը։ Նա հանդարտ քայլերով մոտեցավ բաժնի վարիչին։

—Ժամը մեկն անց է տասը րոպե.Եվրոպայի փոստատարի թղթերը պատրա՞ստ են։

— Ես...ես կարծեցի...

-Դուք չպետք է կարծեք... այլ կատարեք։

Ձեռքերը ետևը դնելով նա դանդաղորեն շրջվեց դեպի բաց պատուհանը;

Մի քարտուղար մոտեցավ նրան։

-Պարոն դիրեկտոր, մենք սակավաթիվ պատասխաններ կստանանք։ Հաղորդում են, որ երկրի խորքերում բազմաթիվ հեռագրական գծեր են ավերվել։

— Լավ։

Ռիվիերը. անշարժ կանգնած նայում էր գիշերին։

Այսպես, յուրաքանչյուր լուր սպառնում էր ինքնաթիռին: Գծերը ավերվելուց առաջ յուրաքանչյուր քաղաք, եթե հնարավորություն էր ունենում պատասխանել Բուենոս -Այրեսին, հայտնում էր ցիկլոնի առաջխաղացման մասին, ինչպես ավազակային ներխուժման մասին։ Դա գալիս է երկրի խորքերից , Կորդիլիերներից։ Նա սրբում է ամեն ինչ ճանապարհին, որը տանում է դեպի ծով...

Ռիվիերին թվում էր, որ աստղերը շատ փայլուն են, և օդը շատ խոնավ։ Ինչ տարօրինակ գիշեր։ Հանկարծ նա սկսում է փչանալ շերտ-շերտ, ինչպես արտաքուստ գեղեցիկ մրգի փափուկ մասը։ Բուենոս -Այրեսի վրա դեռ իշխում էին աստղերը իրենց ամբողջ կազմով, բայց դա մի օազիս էր միայն, այն էլ ժամանակավոր։ Մի նավակայան, որ սակայն դուրս էր անձնակազմի գործողության շառավիղից։ Սպառնալից գիշեր, որին մի չար քամի դիպչելով փչացնում էր։ Դժվար հաղթահարելի գիշեր։

Ինչ-որ տեղ, գիշերվա խորքում մոլորված օդանավի վրա, տագնապի մեջ էին անօգնական մարդիկ։

XIV

Ֆաբիենի կինը զանգահարեց ։

Այն գիշերները, երբ ամուսինը պետք է վերադառնա ր, նա հաշվում էր Պատագոնիայի փոստատարի թռիչքի տևողությունը։ «Հիմա նա թռչում է Տրիլյուից...»

Ապա նորից քնում էր։ Մի քիչ հետո. «Հիմա մոտենում է Սան-Անտոնիոյին, տեսնում է նրա կրակները...»։ Այն ժամանակ նա վեր էր կենում, հեռացնում վարագույրները և զննում երկինքը։ «Այն բոլոր ամպերը նրան խանգարում են»։ Երբեմն լուսինը հովվի նման էր գալիս երկնքում։ Այն ժամանակ երիտասարդ կինը նորից էր պառկում, հանգստացած լուսնով, աստղերով, ամուսնուն շրջապատող այս հազարավոր էակներով։ Մոտավորապես գիշերվա ժամը մեկին կինը զգում էր, որ նա մոտ է. «Հիմա նա շատ հեռու չի լինելու, նա տեսնում է Բուենոս Այրեսը...»։ Այն ժամանակ նա վեր է կենում նորից և պատրաստում ընթրիքը, տաք սուրճ. «Այնքան ցուրտ է վերևում...» Կինը նրան միշտ այնպես էր ընդունում, կարծես նա ձյունե գագաթից իջած լիներ. «Չե՞ս մրսել»։ «Դե, իհարկե ոչ»։ «Ոչինչ, տաքացիր...»։ Մոտավորապես ժամը մեկն անց տասնհինգ րոպեին ամեն ինչ պատրաստ էր լինում։ Այն ժամանակ նա զանգահարում էր։

Այս գիշեր ևս սովորականի նման նա հարցրեց։

— Ֆաբիենը վայրէջք կատարե՞ց։

 Քարտուղարը, որ լսում էր, մի քիչ չփոթվեց.

— Ո՞վ է խոսում։

— Սիմոնա Ֆաբիենը.

— Ա՛հ, մի րոպե...

Քարտուղարը, չհամարձակվելով ոչինչ պատասխանել, լսափողը տվեց բաժնի վարիչին։

— Ո՞վ է խոսում։

— Սիմոնա Ֆաբիենը։

_Ա՛ հ... Ի՞նչ եք ցանկանում, տիկին։

— Ամուսինս վայրէջք կատարե՞ց։

Տիրեց լռություն, որ անբացատրելի թվաց նրան, ապա լսվեց կարճ պատասխան.

-Ոչ,

- Ուշանո՞ւմ է։

-Այո...

Դարձյալ լռություն։

- Այո... ուշանում է։

-Ա՛հ–

Դա վիրավորված մարմնի հոգոց էր։ Ուշացումը ոչինչ...ոչինչ... բայց,երբ ուշացումը երկարում է...

Ահ... ժամը քանիսի՞ն նա այդտեղ կլինի։

- Ժամը քանիսին նա այստեղ կլինի՞, մենք... մենք չգիտենք...

Այժմ կնոջ առաջ կարծես պատ էր կանգնած։ Նա ստանում էր իր հարցերի արձագանքը միայն։

- Խնդրում եմ, պատասխանեցեք ինձ։ Ո՞րտեղ է նա։

- Որտեղ է նա՞։ Սպասեցեք...

Այս դանդաղկոտությունը կնոջը ցավ էր պատճառում։ Այնտեղ, այդ պատի ետևում, ինչ-որ բան էր տեղի ունենում։

Վերջապես նրանք որոշեցին խոսել.

— Կոմոդորոյից նա թռել է ժամը տասնինը անց երեսուն րոպեին։

— Իսկ հետո՞...

—Հետո՞... Շատ է ուշացել... Ծատ է ուշացել վատ եղանակի պատճառով...

— Ա՛հ, վատ եղանակի...

Ի՛նչ անարդարություն, ի՛նչ նենգություն այնտեղ, Բուենոս-Այրեսի վերևում, տոնականորեն փայլող լուսնի մեջ։ Երիտասարդ կինը հանկարծ հիշեց, որ Կոմոդորոյից Տրիլյու հասնելու համար անհրաժեշտ է երկու ժամից ոչ ավելի։

— Եվ նա ամբողջ վեց ժամ թռչում է դեպի Տրիլյո՞ւ։

Բայց չէ՞ որ նա ձեզ լուր է ուղարկում։ Ի՞նչ է ասում...

— Ի՞նչ է ասում։ Բնականաբար, այսպիսի եղանակին... Ինքներդ էլ եք հասկանում... նրա հաղորդումները չեն լսվում։

— Այսպիսի եղանակի՜ն։

— Ուրեմն, համաձայն եք, չէ՞, տիկին, մենք ձեզ կզանգահարենք հենց որ տեղեկություն ստանանք։

–Ա՛հ, դուք ոչինչ չգիտե՜ք...

— Ցտեսություն, տիկին...

-Ո՛չ,ո՛չ ես ուզում եմ խոսել դիրեկտորի հետ։

-Պարոն դիրեկտորը շատ է զբաղված, տիկին, նա խորհրդակցության է...

-Ա՛հ,իմ հոգը չէ,բոլորովին հոգս չէ։ Ես ուզում եմ խոսել նրա հետ։

Բաժնի վարիչը ճակատից սրբեց քրտինքը։

-Մի րոպե...

Նա հրեց Ռիվիերի առանձնասենյակի դուռը։

«Ահա,- մտածեց Ռիվիերը,-ահա թե ինչից էի վախենում»։ Ողբերգության առաջին հուզիչ տարրերը սկսում էին ի հայտ գալ։ Նա մտածեց նախ՝ հեռացնել դրան. մայրերն ու կանայք իրավուն ք չունեն մտնելու վիրահատության սենյակ։ Վտանգի մեջ եղող նավի վրա պետք է լռեցնել ամեն տեսակի հուզմունք։ Դրանք չեն օգնում մարդկանց փրկելուն։

-Միացրեք գիծը։

Նա լսեց այդ թույլ, հեռավոր, դողդոջուն ձայնը և անմիջապես հասկացավ, որ չի կարողանալու նրան ճիշտ պատասխան տալ։

Իրար հակադրվել,դա երկուսի համար էլ բոլորովին ապարդյուն կլիներ։

-Խնդրում եմ,տիկին, հանգստացեք, մեր գործում հաճախ ենք ստիպված լինում երկար սպասել լուրերի։

Նա հասել էր այն սահմանին, որտեղից այն կողմ բարձրանում էր ո՛չ թե փոքրիկ, մասնավոր տագնապի հարցը, այլ հենց իր՝ գործողության։ Ռիվիերի առաջ կանգնած

էր ո՛չ թե Ֆաբիենի կինը, այլ կյանքի մի այլ ըմբռնում: Ռիվիերը կարող էր միայն լսել, խղճալ այդ թույլ ձայնին, այնքան թախծալի, բայց թշնամական այդ երգին: Որովհետև գործողությունը և անհատական երջանկությունը իրար չեն զիջում. նրանք ընդհարման մեջ են: Այս կինը նույնպես խոսում է ոչ թե մի վերապահում չընդունող աշխարհի անունից, որն ունի պարտքի իր ըմբռնումը և իր իրավունքները: Այն աշխարհի անունից, որտեղ երեկոյան սեղանի վրա դրված լամպը իր լույսն է սփռում, որտեղ մի մարմին ձգտում է մի ուրիշ մարմնի, հույսերի, զգվանքների, հիշատակների աշխարհի անունից: Այդ կինը պահանջում էր այն, ինչ իրենն էր և նա իրավացի էր: Ինքը Ռիվիերն էլ էր իրավացի, բայց ոչնչով չէր կարող հակադրվել այդ կնոջ ճշմարտությանը: Ընտանեկան մի համեստ լամպի լույսով Ռիվիերը հայտնաբերում էր իր սեփական, անբացատրելի անմարդկային ճշմարտությունը:

-Տիկին...

Կինն այլևս չէր լսում: Ռիվիերին թվում էր, թե կինն իր թույլ բռունցկներով պատի դեմ կռվելուց հետո, ընկել է գրեթե իր ոտքերի առաջ:

Մի օր, մի ինժեներ, երբ երկուսով հակվել էին կառուցվող կամրջի մոտ ընկած բանվորի վրա, Ռիվիերին ասաց. «Այս կամուրջը արժե՞ արդյոք մարդկային ջախջախված մի դեմք»: Գյուղացիներից և ոչ մեկը, որոնց համար կառուցվում էր այդ կամուրջը, երբեք չէր համաձայնի, հանուն ճանապարհի կրճատման, այնքան սոսկալի կերպով խեղել որևէ մեկի դեմքը: Եվ սակայն, շարունակում են կամուրջներ կառուցել: Ինժեները ավելացրել էր. «Ընդհանուրի շահը կազմվում է մասնավորների շահերից, նա ուրիշ ոչնչի վրա չի կարող հիմնվել»:

-Եվ, սակայն, հետագայում նրան պատասխանել էր Ռիվիերը. «Եթե մարդկային կյանքը գին չունի, այնուամենայնիվ, մենք միշտ գործում ենք այնպես, որ կարծես մարդկային կյանքից ավելի արժեքավոր բան կա: Սակայն ի՞նչ»:

Եվ Ռիվիերը մտածելով կորած անձնակազմի մասին, զգաց, որ իր սիրտը ճմլվում է: Ամեն մի գործունեություն, նույնիսկ կամրջի շինարարությունը, խորտակում է երջանկությունները: Ռիվիերը չէր կարող ինքնիրեն հարց չտալ. «Հանուն ինչի՞»:

«Այս մարդիկ,-մտածում էր նա,- որոնք կործանվելու վրա են, կարող էին երջանիկ ապրել»: Նա տեսնում էր երեկոյան լամպերի ոսկյա սրբարանի առաջ խոնարհված դեմքեր, «Հանուն ինչի՞ ես նրանց դուրս բերեցի այդտեղից»: Հանուն ինչի՞ նա պոկեց նրանց իրենց անհատական երջանկությունից: Միթե՞ առաջին պարտքը չի կայանում այս երջանկությունը պաշտպանելու մեջ:

Բայց հենց ինքն է այն խորտակում: Եվ սակայն մի օր, անխուսափելիորեն, անապատի միրաժների նման հոդս են ցնդում ոսկյա սրբարանները: Ծերությունն ու մահը նրանց ոչնչացնում են ավելի անխղճորեն, քան ինքը: Թերևս գոյություն ունի մի ուրիշ ավելի հաստատ բան, որը պետք է փրկել, թերևս մարդկային կյանքի այդ կողմն է, որ աշխատում է փրկել Ռիվիերը, եթե ոչ, նրա գործն անիմաստ է:

«Սիրել, միայն սիրել, ինչ անելանելի դրություն»: Ռիվիերը աղոտ կերպով զգում էր, որ գոյություն ունի սիրելուց ավելի վեհ պարտականություն: Ավելի ճիշտը, այստեղ նույնպես խոսքը վերաբերում էր քնքշությանը, բայց բոլորովին տարբեր բնույթի: Նա հիշեց մի նախադասություն. «Խնդիրը նրանց անմահացնելն է...»: Որտե՞ղ էր նա կարդացել այդ բառերը: «Այն, ինչ հետապնդում եք միայն ձեր մեջ, անմահ չէ»: Նա հիշեց մի տաճար, որ նվիրված էր Պերուի հին ինկասների արևի աստծուն, ուղղանկյուն քարեր լեռան բարձունքին: Եթե դրանք չլինեին, ի՞նչ կմնար հզոր քաղաքակրթությունից, որը զղջումի նման այդ քարերի ծանրությամբ ճնշում էր ժամանակակից մարդու վրա: «Հանուն ի՞նչ խստության կամ ի՞ նչ տարօրինակ սիրո, անցյալի ժողովուրդների առաջնորդը, ստիպելով իր հպատակներին բարձրացնել այս տաճարը լեռան վրա, հարկադրեց նրանց բարձրացնել հավիտենական հուշարձան ի պատիվ իրենց»: Ռիվիերը անուրջներում նորից տեսավ բազմաթիվ փոքրիկ քաղաքների բնակիչներին, որոնք երեկոյան պտտվում են իրենց երաժշտական տաղավարների շուրջը: «Այսպիսի երջանկությունը նման է լծասարք կրելու», — մտածեց նա: Եթե հնում ժողովուրդների առաջնորդը խղճահարություն չէր զգացել մարդու տառապանքի առաջ, ապա նա անհուն ափսոսանք էր զգացել նրա մահվան հանդեպ: Ոչ թե առանձին անհատների մահվան, այլ ողջ մարդկային ցեղի, որի հիշատակը կջնջի ավազների ծովը: Եվ նա մղում է իր ժողովրդին կանգնեցնելու գոնե քարերը,որոնց անապատի ավազը անկարող է ծածկել:

XV

Թերևս քառածալ այս թուղթը փրկի նրան, ատամները սեղմելով Ֆաբիենը բաց արեց այն:

«Անհ՛նար է կապվել Բոլենոս-Այրեսի հետ: Ես նույնիսկ, չեմ կարողանում ձեռք տալ սարքավորումներին, կայծերը խփում են մատներիս»:

Զղայնացած, Ֆաբիենը ուզեց պատասխանը գրել, սակայն, երբ գրելու համար բաց թողեց ղեկանիվը: կարծես մի հզոր ալիք թափանցեց նրա մարմինը: Հողմապտույտները բարձրացնում էին նրան հինգ տոննա մետաղի հետ միասին և շպրտում մի կողմ: Ֆաբիենը հրաժարվեց գրելուց:

Նրա ձեռքերը կրկին սեղմվեցին ալիքի կատարին և հանդարտեցրին այն:

Ֆաբիենը խոր շնչեց: Եթե ռադիստը փայլակի վախից վերցնի անտենան, տեղ հասնելուն պես Ֆաբիենը նրա քիթը կջարդի: Ինչ գնով էլ լինի, պետք է կապվել Բուենոս– Այրեսի հետ, կարծես հազար հինգ հարյուր կիլոմետր այն կողմ գտնվող Բուենոս-Այրեսից կարող էին փրկության, պարան նետել այս վիհի մեջ: Չունենալով գոնե մի դողդոջ լույս, նույնիսկ ետ ընկած պանդոկի աղոտ լույսը, որը ինչպես փարոս կապացուցեր հաստատուն հողի գոյությունը, Ֆաբիենին անհրաժեշտ էր գոնե մի ձայն, միայն մեկն այն աշխարհից, որը թվում էր, թե դադարել էր գոյություն ունենալ: Օդաչուն բարձրացրեց և թափահարեց բռունցքը կարմիր լույսի մեջ, ցանկանալով հասկացնել նրան, մյուսին, ետևում նստողին, իրենց ողբերգական վիճակը, բայց մյուսը, հակված ամայացած տարածության, թաղված քաղաքների, մեռած կրակների վրա, նրան չհասկացավ:

Ֆաբիենը կհետևեր որևէ խորհրդի, եթե միայն այդպիսին հասներ նրան: Նա մտածում էր. «Եթե ինձ ասեին՝ թռիր շրջանաձև, ես կթռչեի շրջանաձև, և եթե ասեին՝ թռիր ուղիղ դեպի հարավ...»: Բայց ինչ-որ տեղ գոյություն ունեին հանդարտ, լուսնի հսկա ստվերների տակ տարածված երկրներ: Այնտեղ են ընկերները, որոնք ճանաչում են այդ երկրները, գիտնականների նման լավատեղյակ, ամենազոր, նրա հակվել են քարտեզի վրա, ծաղիկների նման գեղեցիկ լամպի լույսի տակ:

Իսկ ի՞նչ գիտեր ինքը, բացի հողմապտույտներից և գիշերից, որ փլզումի արագությամբ օդանավի վրա էր շպրտում իր սև հեղեղը: Միթե՞ կարող էին բոլորն էլ թողնել իրենց երկուսին այս մրրկայուների ու այս ամպերի բոցերի մեջ: Չէին կարող: Ֆաբիենին անպայման կհրամայեն. «Ուղղություն երկու հարյուր քառասուն...»: Եվ նա կվերցնի ուղղորդյուն երկու հարյուր քառասունը: Բայց նա մենակ էր:

Նրան թվում էր, թե նյութն էլ էր ապստամբել: Ամեն անգամ, երբ մեքենան սուզվում էր, մոտորն այնքան ուժեղ էթ թրթռում, որ օդանավի ամբողջ մասսան ցնցվում էր, կարծես նրա միջով զայրույթի դող էր անցնում: Ֆաբիենը օգտագործում էր իր ամբողջ ուժը, որպեսզի զսպի օդանավը, գլուխը հակա՛ծ նա նայում էր միայն գիրոսկոպին, որովհետև դրսում նա չէր տարբերում, թե որտե՞ղ է վերջանում երկինքը, և սկսվում գետինը: Ամեն ինչ կորչում էր աշխարհաստեղծման առաջին խավարի մեջ: Սակայն

սարքավորումների սլաքները ավելի ու ավելի արագ էին տատանվում, նրանց հետևելը դառնում էր ավելի դժվար: Արդեն օդաչուն, որին նրանք խաբում էին սխալ ցուցմունքներով, վատ էր պայքարում, նա կորցնում էր բարձրությունը և կամաց-կամաց խրվում այդ խավարի մեջ: Ֆաբիենը ստուգեց իր բարձրույթյունը. «Հինգ հարյուր մետր»: Դա բլուրների բարձրությունն էր: Նրան թվաց, որ նրանց սրընթաց ալիքները գլորվում են իր կողմը: Նա կարծում էր, որ հողի ամբողջ զանգվածները, որոնց ամենափոքր մասնիկն անգամ կարող էր նրան ջախջախել, կարծես արձակվելով իրենց ամրակներից և քանդելով պտուտակները, հարբածի նման պտտվում էին իր շուրջը, սկսելով մի տարօրինակ պար, որի օղակը հետզհետե սեղմում էր նրան:

Ֆաբիենը վճռեց: Նա վայրէջք կկատարի որևէ տեղ, թեկուզ ջարդուփշուր լինելու վտանգին ենթարկվի: Եվ, որպեսզի կարողանա խուսափել գոնե բլուրներից, նա բաց թողեց իր միակ լուսատու հրթիռը: Հրթիռը բոցավառվեց, պտտվեց, լուսավորեց մի հարթ դաշտ և հանգավ: Ծովն էր:

Ֆաբիենը անմիջապես հասկացավ, որ կորած է: «Հակառակ քառասուն աստիճանի ուղղման, ես շեղվել եմ: Եվ դա ցիկլոնի արածն է: Որտե՞ղ է երկիրը»: Նա թեքվեց ուղիղ դեպի արևմուտք: Նա մտածեց. «Հիմա առանց հրթիռի ես կջախջախվեմ»: Այս պետք է պատահեր մի օր:

Իսկ իր ընկերը այնտեղ, ետևում... «Նա անպայման անտենան հանել է»: Սակայն օդաչուն նրա վրա այլևս չէր բարկանում: Եթե ինքը պարզապես ձեռքերը բացեր, նրանց կյանքը թեթև փոշու նման անմիջապես կցրվեր: Ֆաբիենը իր ձեռքերի մեջ էր պահում թե՛ իր, թե՛ ընկերոջ բաբախող սրտերը: Եվ հանկարծ ձեռքերը սարսափեցրին նրան: Բաբանի հարվածները հիշեցնող հողմապտույտների մեջ, որպեսզի մեղմացնի ղեկի ցնցումները, որոնք կարող էին սղոցել ղեկավարման լարերը, նա ամբողջ ուժով կառչեց ղեկանիվին: Եվ կառչած էլ մնաց: Հիմա նա այլևս չէր զգում՝ գործադրած ճիգերից թմրած ձեռքերի գոյությունը: Փորձեց շարժել մատները, որեսզի իմանար, թե նրանք դեռ հնազանդվում են իրեն: Թրվում էր, թե նրա ձեռքերը վերջանում էին ինչ-որ օտար բանով: Անզգա և թույլ հավելվածներով: Նա մտածեց: «Ամբողջ ուժով պետք է երևակայեմ, որ սեղմում եմ,.,»: Նա չգիտեր, թե արդյոք այդ միտքը հասնո՞ւմ է մինչև ձեռքերը: Ղեկանիվի ցուցումները նա հասկանում էր միայն ուսին զգացած ցավերով. «Ղեկանիվը ինձնից խույս կտա... Ձեռքերս կբացվեն...»: Բայց վախեցավ այդ մտքից, որովհետև զգաց, որ այս անգամ ձեռքերը հնազանդվում են երևակայության անընմբռնելի ուժին, դանդաղորեն բացվում են մթության մեջ, որպեսզի իրեն հանձնեն մահվան: Ֆաբիենը դեռ կարող էր

պայքարել, վարձել իր բախտը: Չկա արտաքին ճակատագիր: Սակայն կա ներքին ճակատագիր: Հասնում է այն պահը, երբ մարդն իրեն զգում է խոցելի, և այն ժամանակ սխալները գլխապտույտի նման քաշում են նրան:

Եվ ահա այդ րոպեին էր, որ նրա գլխավերևում փոթորկածին ամպերի պատռվածքի միջով փայլեցին մի քանի աստղեր, ինչպես մահաբեր խայծ:

Նա հասկացավ, որ այդ թակարդ է: ճեղքի միջով երևում

է երեք աստղ, բարձրանում ես դեպի դրանք,բայց էլ չես կարողանում իջնել,մնուն ես այնտեղ կրծելու այդ աստղերը:

Նա բարձրացավ,աստղային ուղեցույցների շնորհիվ, հնարավորին չափ զսպելով օդանավի վայրիվերումները: Նրանց թույլ մագնիսը քաշում էր նրան: Ֆաբիենը այնքան երկար էր տառապել հետապնդելով լույսը, որ ոչ մի գնով բաց չէր թողնի ամենաաղոտ կայծն անգամ: Պանդոկի դրժգույն լույսով հարուստ զգալով իրեն, նա մինչև մահ անդադար կպտտվեր այդ նշանի շուրջը, որին նա այնքան կարոտել էր: Եվ ահա նա բարձրանում էր դեպի լուսեղեն դաշտերը:

Նա բարձրանում էր դանդաղորեն, պարուրաձև, ջրհորի միջով, որ բացվել էր և հիմա փակվում իր ներքևում: Որքան նա բարձրանում էր, այնքան ամպերը կորցնում էին իրենց կողտոտ գունավորումը, նրանք անցնում էին նրա առաջից ալիքների նման, որոնք հետզհետե ավելի սպիտակ և մաքուր էին դառնում: Եվ ահա Ֆաբիենը դուրս եկավ ջրհորից:

Նրա զարմանքը անսահման էր: Պայծառությունը այնքան սաստիկ էր, որ նրան շլացրեց: Նա ստիպված եղավ մի քանի րոպե փակել աչքերը: Ֆաբիենը երբեք չէր կարծում, որ գիշերն ու ամպերը կարող են այդքան շլացուցիչ լինել: Լիալուսինն ու բոլոր համաստեղությունները նրանց վեր էին ածել ճառագայթող ալիքների:

Այն րոպեին, երբ օդանավը դուրս եկավ,միանգամից հայտնվեց անհավատալի թվացող անդորրության մեջ: Այստեղ ոչ մի ծփանք նրան չէր օրորում: Նավակի նման, որ անցնում է ամբարտակը, ինքնաթիռը մուտք գործեց ապահով ջրերը: Նա կարծես ապաստանած լիներ երկնքի անհայտ թաքուն մի անկյունում,ինչպես երջանիկ կղզիների ծովածոցում:

Ներքևում փոթորկվում էր մրրիկը, որ կազմում էր երեք հազար մետր հաստություն ունեցող մի զանգված, մի ուրույն աշխարհ, որի միջով անցնում էին հողմերը, ջրային

թաթառները, կայծակները, բայց նա դեպի աստղերն էր դարձրել բյուրեղապակե և ձյունե մի դեմք:

Ֆաիբենը մտածում էր, որ հասել է դրախտի նախադռներին, որովհետև ամեն ինչ լուսավոր էր դարձել, ձեռքերը, զգեստները, օդանավի թևերը: Որովհետև լույսը աստղերից չէր իջնում, այլ բխում էր ներքևում և իր շուրջը գտնվող այդ սպիտակ պաշարներից:

Նրա ներքևում տարածված ամպերը անդրադարձնում էին կուրացուցիչ փայլը: Աջ և ձախ կողմի ամպերը ևս, որոնք աշտարակների նման բարձր էին, անդրադարձնում էին նույն փայլը: Անձնակազմը լողում էր լուսեղե կաթի մեջ, որի հորձանքներում շրջապտույտ էր կատարում ինքնաթիռը, Ֆաբիենի ետ նայեց և տեսավ, որ ռադիստը ժպտում է:

-Գործերս լավ է,-բացականչեց նա:

Սակայն ձայնը կորավ թռիչքի աղմուկի մեջ, նրանք միայն ժպիտներով էին հաղորդակցվում:

«Ես բոլորովին խենթացել եմ,-մտածում էր Ֆաբիենը,- մենք կորած ենք, իսկ ես ժպտում եմ»:

Սակայն հազարավոր մութ ձեռքեր նրան բաց էին թողել: Նրա կապանքները քանդել էին, ինչպես բանտարկյալինը, որին թույլ են տալիս մենակ զբոսնելու ծաղիկների մեջ:

«Չափազանց գեղեցիկ է»,-մտածում էր Ֆաբիենը: Նա թափառում էր գանձարանի ոսկեդրամների նման կուտակված աստղերի մեջ, մի աշխարհում, որտեղ, բացի իրենից՝ Ֆաբիենից, և իր ընկերոջից, բացարձակապես ոչ մի կենդանի արարած չկար: Նրանք նման էին այն առասպելական գողերին, որոնք փակված էին գանձարանում, որտեղից չէին կարող դուրս գալ: Նրանք անսահմանորեն հարստացած, բայց դատապարտված թափառում են սառը, թանկարժեք քարերի մեջ:

XVII

Պատագոնիայի Կոմոդորո Ռիվադավիայի օդանավակայանի ռադիո-հեռագրիչներից մեկը ձեռքով կտրուկ շարժում արեց և բոլոր նրանք, ովքեր այն գիշեր հերթապահում էին օդանավակայանում, անկարող լինելով օգնել ընկերներին հավաքվեցին նրա շուրջը և հակվեցին սեղանի վրա:

Նրանք թեքվեցին մաքուր և պայծառորեն լուսավորված թղթի վրա։ Ռադիստի ձեռքը դեռ տատանվում էր։ նա պահում էր տառերը, ինչպես բանտարկյալների։ Սակայն մատները արդեն դողում էին, մատիտը ճռճվում էր։

«Ամպրոպնե՞ր»։

Ռադիստը գլխով արեց։ Չրթ-չրթոցները խանգարում էին նրան հասկանալ։

Ապա նա սկսեց գծել մի քանի անընթեռնելի նշաններ։ Հետո բառեր։ Եվ վերջապես կարողացավ դասավորել տեքստ։

«Շրջափակված ենք փոթորկի վերևում՝ երեք հազար մետր բարձրության վրա։ Նավարկում ենք ուղիղ արևմուտք, ղեպի երկրի խորքը, որովհետև շեղվել էինք դեպի ծովը։ Մեր ներքևը լրիվ փակված է։ Չգիտենք, արդյոք դեռ ծովի վրայո՞վ ենք թռչում։ Հաղորդեցեք, թե փոթորիկը տարածվե՞լ է արդյոք մայր ցամաքի խորքերում»։

Հեռագիրը Բուենոս-Այրես հասցնելու համար, ամպրոպի պատաճառով, ստիպված եղան հաղորդել այն շղթայաձև կայանից-կայան։ Գիշերվա մեջ այդ ուղերձը առաջ էր շարժվում ինչպես կրակ, որ վառվում է աշտարակից-աշտարակ։ Բուենոս-Այրեսը ուղարկեց պատասխանը.

«Փոթորիկը բռնել է ամբողջ մայր ցամաքը։ Ինչքա՜ն վառելանյութ է մնում ձեզ»։

«Կես ժամվա»։

Եվ այս նախադասությունն անցնելով հերթապահից հերթապահ, հասավ Բուենոս-Այրես։

Անձնակազմը դատապարտված էր. երեսուն րոպե չանցած ցիկլոնը նրան կտաներ դեպի գետին։

XVIII

Իսկ Ռիվիերը խորհում է։ Այլևս ոչ մի հույս չկա։ Անձնակազմը կխորտակվի որևէ տեղ՝ գիշերվա մեջ։ Ռիվիերը հիշում է մի տեսարան, որը մանուկ հասակում իր վրա խոր տպավորություն էր թողել։ Խեղդվածի մարմինը գտնելու համար դատարկում էին մի ջրափոս։ Այս դեպքում անձնակազմից ոչինչ չեն գտնի, մինչև որ այս մութ զանգվածը չփարատվի երկրի վրայից, մինչև որ արևը չբարձրանա հարթավայրերի, ցորենների, ավազների վրա։ Կարող է պատահել, որ հասարակ գյուղացիները գտնեն

երկու երեխաների, որոնք թևերով դեմքերը ծածկած, քնածի նման ընկած լինեն խոտերի վրա, արևածագի խաղաղ ոսկու մեջ: Բայց գիշերը նրանց

խեղդած կլինի:

Ռիվիերը մտածում էր գանձերի մասին, որոնք թաղված են գիշերվա խորությունների մեջ, ինչպես առասպելական ծովերում... Գիշերա յին խնձորներն իրենց բոլոր ծաղիկներով սպասում են արշալույսին, ծաղիկներ, որոնք դեռ կարող են փթթել:

Գիշերը հարուստ է, լի բուրմունքով, քնած դառներով, դեռ չգունավորված ծաղիկներով:

Դանդաղորեն դեպի արևածագ են բարձրանում արգավանդ հողերը, խոնավ պուրակները, թարմ առվույտների զով դաշտերը. Սակայն անվնաս դարձած բլուրների, արոտավայրերի ու գառների մեջ, աշխարհի այս հեզությունների մեջ, երկու երեխաներ հավիտյան քնած կմնան: Կարծես տեսանելի աշխարհից ինչ-որ բան ծորում է դեպի անտեսանելի աշխարհը:

Ռիվիերը ճանաչում է Ֆաբիենի անհանգիստ և զգայուն կնոջը, թվում էր, թե սերը նրան կարճ ժամանակով էին փոխ տվել, ինչպես աղքատ երեխային խաղալիք են տալիս:

Ռիվիերը մտածում է Ֆաբիենի ձեռքի մասին, որ դեռ մի քանի րոպե ևս պահում է ղեկանիվը, իր ճակատագիրը: Այն ձեռքի, որ կարողանում էր փայփայել: Այն ձեռքի, որ հանգչելով կրծքի վրա, ալեկոծում էր այն, ինչպես աստվածային ձեռք: Այն ձեռքի, որ հպվելով դեմքին, վերափոխել էր այն: Այն ձեռքի, որ հրաշագործ էր:

Ֆարիենը թափառում է ամպերի ծովի գիշերային հիասքանչության մեջ, սակայն ամպերից ներքև հավիտենականությոսնն է: Նա մոլորվել է համաստեղությունների մեշ, որ միակ բնակիչն է ինքը: Ֆաբիենը իր ձեռքերում է դեռ պահում աշխարհը և կրծքին սեղմած օրորում այն: Նա սեղմում է ղեկը, որն իր մեշ կրում է մարդկային ողջ գանձը և հուսահատորեն մի աստղից մյուսն է տանում այդ անօգուտ գանձը, որը շուտով պետք է բաց թողնի:

Ռիվիերը մտածում է, որ մի ռադիոկայան դեռ լսում է նրան: Մի երաժշտական ալիք, մի մեղմ գեղգեղանք է միայն, որ դեռ Ֆաբիենին կապում է աշխարհին: Ոչ մի գանգատ ոչ մի ճիչ: Այլ ձայներից ամենավճիտը, որ երբևիցե առաջացրել է հուսահատությունը:

XIX

Ռոբինոն խանգարեց Ռիվիերի միայնությունը։

— Պարոն դիրեկտոր, ես մտածեցի..— թերևս կարելի փորձել...։ Նա ոչինչ չուներ առաջարկելու, սակայն ցանկնում էր ցույց տալ բարի կամք։ Նա այնքան էր ցանկանում մի ելք գտնել և փնտրում էր այն, ինչպես փնտրում են ռեբուսի լուծումը։ Նա միշտ լուծումներ էր գտնում, բայց երբեք Ռիվիերը չէր լսում դրանք. «Տեսնում եք, Ռոբինո, կյանքում լուծումներ չկան։ Կյանքում կան ուժեր, որոնք շարժման մեջ են. պետք է ստեղծել նրանց, և լուծումները կհետևեն»։ Այսպես Ռոբինոն ստիպված էր սահմանափակել իր պաշտոնը՝ մեխանիկների խմբից ստեղծելով մի շարժիչ ուժ։ Մի հա մեստ շարժիչ ուժ, որ ժանգից փրկում էր պտուտակների անուրները։

Բայց այս գիշերվա դեպքերը զինաթափ էին արել Ռոբինոյին։ Տեսչի իր կոչումը ոչ մի իշխանություն չուներ փոթո րիկների վրա, ոչ էլ ուրվական դարձած անձնակազմի, Ի իսկապես այլևս չէր պայքարում ճշտապահության պարգևի համարա, խուսափել միայն մի պատժից, այն միակից,որ կջնջեր Ռոբինոյի սահմանած բոլոր պատիժները՝ մահից։

Եվ հիմա անօգուտ դարձած Ռոբինոն անգործ թափառում էր գրասենյակներում։

Ֆաբիենի կինը խնդրեց, որ զեկուցեն իր մասին։ Քարտուղարների սենյակում նա տագնապահար սպասում էր, որ Ռիվիերլ ընդունի իրեն։ Ծառայողները գաղտագողի նայում էին նրա դեմքին։ Կինը մի տեսակ անհարմար էր զգում և վախով շուրջն էր նայում. այստեղ ամեն ինչ մերժում էր նրան։ Այս մարդիկ, որոնք կարծես անցնելով դիակի վրայով, սովորականի նման շարունակում էին իրենց աշխատանքս, այս թղթապանակները, ուր մարդկային կյանքը, մարդկային տառապանքը թույնում էին միայն չոր թվերի շարքեր։ Այս կինը փնտրում էր մի բան, որ խոսեր Ֆաբիենի մասին։ Տանը ամեն ինչ ապացուցում էր նրա բացակայությունը, կիսաբաց անկողինը, պատրաստ սուրճը, ծաղիկների փունջը... Իսկ այստեղ նա ոչ մի նշան չէր հայտնաբերում։ Ամեն ինչ հակադրվում էր խղճահարությանը, բարեկամությանը և հիշողություններին։ Այն միակ նախադասությունը, որ նա լսեց, որովհետև ոչ ոք բարձրաձայն չէր խոսում նրա ներկայությամբ, մի ծառայողի հայհոյանք էր, որը մի ցուցակ էր պահանջում... «Շարժիչների ցուցակը, տեր աստված, որ մենք ուղարկելու ենք Սանտիս»։ Անհուն զարմանքի զգացումով կինը աչքերը բարձրացրեց այդ մարդու վրա, հետո նայեց պատին, որի վրա կախված էր քարտեզը։ Նրա շրթունքները թեթևակի դողում էին։

Նա անհարմար էր զգում, գուշակելով, որ այստեղ ինքն արտահայտում էր մի թշնամական ճշմարտություն, նա գրեթե զղջում էր եկած լինելու համար, ցանկանում էր թաքնվել և վախենալով ավելի շատ նկատելի լինելուց, զսպում էր իրեն, որ չհազա և չլացի։

Երիտասարդ կինը իրեն զգում էր անսովոր, անպատշաճ վիճակի մեջ, կարծես մերկ լիներ։ Բայց նրա ճշմարտությունն այնքան ուժեղ էր, որ թռուցիկ հայացքները գաղտագողի վերադառնում էին շարունակ դեպի նրա դեմքը և կարդում այդ ճշմարտությունը։ Այս կինը շատ գեղեցիկ էր։ Նա մարդկանց հիշեցնում էր երջանկության սրբազան աշխարհի մասին։ Հիշեցնում էր, թե իրենց գործունեությամբ ինչպիսի վեհ նյութի էին հարվածել ակամա։ Այդ բազմաթիվ հայացքների տակ կինը փակեց աչքերը։ Նա հիշեցնում էր, թե մարդիկ անգիտակցաբար ինչպիսի խաղաղություն կարող են կործավել։

Ռիվիերը ընդունեց նրան։

Կինը եկել էր երկչոտությամբ՝ պաշտպանելու իր ծաղիկները, պատրաստ սուրճը, երիտասարդ մարմինը։ Այս ավել քան սառը սենյակում նրա շրթունքները դարձյալ սկսեցին դոզալ։ Նա էլ էր գիտակցում, որ իր սեփական ճշմարտությունն անբացատրելի է այս մյուս աշխարհին։ Այն ամենը, ինչ ընդվզում էր նրա մեջ՝ կրքոտ, ջերմ սերը, նրա նվիրվածությունը, թվում էր, թե այստեղ ստանում էր տաղտկալի և եսասիրական կերպարանք։ Նա ցանկանում էր փախչել այստեղից։

— Ձեզ խանգարում եմ...

— Տիկին,— ասաց նրան Ռիվիերը,— դուք ինձ չեք խանգարում։ Դժբախտաբար, տիկին, դուք և ես, բացի սպասելուց, ուրիշ ավելի լավ բան չունենք անելու։

Կինը թեթևակի ցնցեց ուսերը, սրի իմաստը հասկացա Ռիվիերը. «Ինչի՞ են պետք այդ լամպը, պատրաստ սուրճը, այդ ծաղիկները, որոնք ես վերստին գտնելու եմ տանը...»։ Մի անգամ մի երիտասարդ մայր խոստովանել էր Ռիվիերին.

«Ես դեռ չեմ գիտակցում իմ երեխայի մահը, փոքր իրեր են, որ աչքի ընկնելով, ցավ են պատճառում, ինչպես օրի նակ, նրա զգեստները, և երբ գիշերը արթնանում եմ, դեպ սիրտս է բարձրանում մի քնքշանք, որը պիտանի չէ ոչ ոքի, ինչպես իմ կաթը...»։ Այս կնոջ համար Ֆաբիենի մահը կսկսի վաղը, նա այդ մահը կբացահայտի այլևս աննպատակ դարձած յուրաքանչյուր շարժման մեջ, յուրաքանչյուր սովորական իրի

մեջ։ Ֆաբիենը դանդաղորեն կհեռանա իր տնից Ռիվիերը թաքցնում էր իր խոր խղճահարությունը։

- Տիկին։

Երիտասարդ կինը հեռանում էր, խոնարհ ժպիտով, անգիտակ իրե սեփական ուժին։

Ռիվիերը ծանրորեն նստեց։

«Իսկ նա օգնում է ինձ հայտնաբերելու այն. ինչ փնտրում էի...»։

Մտացրիվ, նա մատներով թմբթմբացնում էր հյուսիսից ստացված հեռագրերը և խորհում։

«Մենք չենք պահանջում անմահանալ, այլ՝ չտեսնել, թե ինչպես արարքներն ու իրերը միանգամից կորցնում են իրենց իմաստը։ Այն ժամանակ ի հայտ է գալիս դատարկությունը, որ շրջապատում է մեզ...»։ Նրա հայացքն ընկավ հեռագրի վրա։

«Եվ ահա ինչպես է մեզ մոտ մուտք գործում մահը, այս ուղերձների միջոցով, որոնք այլևս ոչ մի իմաստ չունեն...։

Նա նայեց Ռոբինոյին։ Այս սահմանափակ երիտասարդն աւժմ անօգուտ դարձած, կորցնում էր ամեն իմաստ։ Ռիվիերը գրեթե խստությամբ նրան ասաց.

— Ի՞նչ է, ե՞ս պետք է ձեղ համար գործ գտնեմ։ Ապա Ռիվիերը հրեց դեպի քարտուղարների սրահը տանող դուռը, և Ֆաբիենի անհետացումը դարձավ ակնհայտ ու ցնցեց նրան, այն նշաններով, որ չէր կարողանում տեսնել տիկին Ֆաբիենը։ Պատից կախված ցուցատախտակի այն սյունակում, որտեղ նշվում էին անօգտագործելի սարքավորումների անունները, արդեն տեղ էր գտել Ռ, Բ, 903 հաշվառման քարտը՝ Ֆաբիենի օդանավի քարտը։ Քարտուղարները, որոնք պատրաստում էին Եվրոպայի փոստատարի թղթերը, իմանալով, որ ուշանալու է մեկնումը, դանդաղ էին աշխատում։ Վայրէջքի հրապարակից հեռախոսով հրահանգներ էին պահանջում անձնակազմերի համար, որոնց հերթապահությունը այժմ դարձել էր աննպատակ։ Կյանքի ֆունկցիաները դանդաղել էին։ «Մահը, ահա այն», — մտածում էր Ռիվիերը։ Նրա կյանքի գործը նման էր ծովում վթարի ենթարկված, քամուց զրկված առագաստանավի։

Նա լսեց Ռոբինոյի ձայնը։

«Պարոն դիրեկտոր,,. Նրանք ամիս ու կես առաջ էին ամուսնացել...»։

— Գնացեք աշխատելու։

Ռիվիերը շարունակ նայում էր քարտուղարներին և նրանց ետևում տեսնում սևագործներին, մեխանիկներին, օդաչուներին, որոնք կառուցողի իրենց հավատով օգնել էին նրան իր գործում։ Նա մտածեց նախկին փոքրիկ քաղաքների մասին, որոնք, լսելով «կղզիների» մասին՝ կառուցեցին նավ, որպեսզի նրա վրա բարձեն իրենց հույսերը։ Որպեսզի մարդիկ կարողանան տեսնել, թե ինչպես է իրենց հույսը առագաստների նման բացվում ծովի վրա։ Բոլորն աճել են, դուր են եկել իրենց նեղլիկ ներքնաշխարհից, բոլորին ազատագրել է մի նավ։ «Նպատակը, թերևս, ոչինչ չի ապացուցում բայց գործը մարդկանց փրկում է մահից։ Նրանք դառնում են անմահ՝ իրենց նավով»։

Ռիվիերը ևս կպայքարի մահվան դեմ, երբ նա վերա դարձնի հեռագրերին իրենց իսկական իմաստը, երբ հերթապահ խմբերին վերադարձնի նրանց տագնապալի մտահոգությունները, իսկ օդաչուներին՝ ողբերգությամբ լի իրենց նպատակը։ Եվ Ռիվիերի գործը կլցվի կյանքով, ինչպես նավի առագաստները բաց ծովում լցվում են քամիով։

XX

Կոմոդորո Ռիվադավիան այլևս ոչինչ չի լսում, սակայն նրանցից հազար կիլոմետր հեռու գտնվող Բահյա Բլանկան քսան րոպե հետո, բռնում է երկրորդ ուղերձը.

«Իջնում ենք։ Մտնում ենք ամպերի մեջ…»։

Ապա Տրիլյուի օդանավակայանում անհասկանալի տեք տից բռնեցին երկու բառ.

«…Ոչինչ տեսնել…»։

Այսպիսին են կարճ ալիքները։ Այնտեղ նրանց բռնում են, բայց այստեղ չի լսվում։ Ապա առանց պատճառի, ամեն ինչ փոխվում է։ Այս անձնակազմը, որի տեղն անհայտ է, նորից պատկերանում է կենդանի մարդկանց, որպես տարածությնից ու ժամանակից դուրս և նրանց հաղորդումները ռադիոկայանի սպիտակ թղթերի վրա արդեն գրվում են ուրվականների կողմից։

Վառելիքը վերջացե՞լ է արդյոք, թե անկումից առաջ օդաչուն խաղում է իր վերջին քարտը, փորձում է հասնել գետին՝ առանց ջախջախվելու։

Բուենոս-Այրեսը հրամայում է Տրիլյուին.

«Հարցրեք նրան այդ մասին»։

Ռադիոկայանի լսասենյակը նման է լաբորատորիայի, նիկել, պղինձ մանոմետրեր, լարերի մի ամբողջ ցանց։ Գիշերային հերթափոխի ռադիստները, սպիտակ խալաթներով, լուռ հակված սեղանների վրա, կարծես սովորական փորձ են կատարում։

Ռադիստները նուրբ մատներով շոշափում են սարքավորումները, հետազոտում մագնիսական երկինքը, ինչպես ոսկեխույզներն են փնտրում ոսկու երակը։

— Չե՞ն պատասխանում։

— Չեն պատասխանում։

Կարող է պատահել, որ նրանք բռնեն մի նոր ձայն, որը կլինի կյանքի խորհրդանիշը։ Եթե օդանավը և իր եզրային կրակները նորից բարձրանան դեպի աստղերը, գուցե ռադիստները լսեն այդ աստղի երգը…

Վայրկյանները հոսում են։ Նրանք հոսում են ինչպես արյուն։ Թռիչքը դեռ շարունակվո՞ւմ է արդյոք։ Անցնող յուրաքանչյուր վայրկյանն իր հետ տանում է հույսի մի մասնիկ։ Եվ ժամանակը, որ սահում է, թվում է կործանարար։ Քսան դար շարունակ ժամանակը ազդել է տաճարի վրա, իր համար ճանապարհ է հարթել գրանիտի միջով և փոշու է վերածել տաճարը, ավերիչ դարերի այդ ուժը կուտակվում է յուրաքանչյուր վայրկյանի մեջ և սպառնում անձնակազմին։ Յուրաքանչյուր վայրկյան մի բան է տանում։ Տանում է Ֆաբիենի ձայնը, Ֆաբիենի ծիծաղը, նրա ժպիտը։ Լռությունն ավելի է ընդարձակվում։ Նա ավելի՛ է ծանրանում և նշում անձնակազմին, ինչպես ծովի զանգվածը։

Ինչ-որ մեկն ասում է. «Մեկն անց քառասուն։ Վառելանյութի վերջին սահմանն է, անկարելի է, որ նրանք դեռ թռչելիս լինեն»։

Եվ տիրում է լռություն։

Ինչ-որ դառը և տհաճ համ է զգացվում շրթունքների վրա, ինչպես ճանապարհորդության վերջում։ Ինչ-որ բան է պտահել, որի մասին ոչինչ հայտնի չէ, թեթևակի զզվանք առաջացնող ինչ-որ բան։ Այդ նիկելե մասերի և այդ պղնձե զարկերակների միջև զգում ես միևնույն տխրությունը, որը իշխում է ավերված

գործարանների վրա։ Այս բոլոր սարքավորումները թվում են ծանր, անօգուտ, աննպատակ, ինչպ՛ չորացած ճյուղերի ծանրությունը։

Մնում է միայն սպասել ցերեկվան։

Մի քանի ժամից հետո ամբողջ Արգենտինան խավար դուրս կլողա արևին ընդառաջ։ Այս մարդիկ կմնան իրեց տեղում, ինչպես ավազոտ ծովափին կանգնածները, դիտելով, թե ինչպես են ջրից դանդաղորեն դուրս քաշում ուռկանը, որի պարունակությունը անհայտ է։

Ռիվիերը իր գրասենյակում զգում է լարվածության այն թուլացումը, որ լինում է միայն մեծ աղետներից հետո, երբ ճակատագիրը մարդուն ազատում է որևէ լուրջ վճիռ կայանելուց։ Նա ոտքի է հանել ամբողջ նահանգի ոստիկանությունը։ Ուրիշ ոչինչ չի կարող անել, պետք է սպասել։

Սակայն կարգ ու կանոն պետք է տիրի նույնիսկ ննջեցյալի տանը։ Ռիվիերը նշան է անում Ռոբինոյին։

«Ուղարկեցեք հեռագրեր հյուսիսի բոլոր օդանավակայաններին։ Նախատեսվում է Պատագոնիայի փոստատարի զգալի ուշացում, որպեսզի Եվրոպայի փոստը շատ չուշնա, Պատագոնիայի փոստը թողեք հաջորդ փոստատաի համար»։

Թեթևակի կորանալով նա հակվում է առաջ։ Սակայն ջանք է թափում և հիշում ինչ-որ կարևոր բան։ Ահ, այո։ Եվ, որպեսզի չմոռանա, ասում է.

— Ռոբինո։

-Պարոն Ռիվիե՞ր։

— Կխմբագրեք մի գրություն։ Օդաչուներին արգելվում է կատարել հազար ինհարյուր պտույտից ավել։ Ջարդում են մոտորները։

– Լավ, պարոն Ռիվիեր։

Ռիվիերը ավելի է կորանում։ Նա ամենից ավելի հիմա կարիք ունի առանձնության։

– Գնացեք, Ռոբինո, գնացեք, բարեկամս։

Եվ Ռոբինոյին սարսափեցնում է այս հավասարությունը՝ տեսիլքների հանդեպ։

XXI

Այժմ Ռոբինոն մելամաղձոտ թափառում էր գրասենյակում: Ընկերության կյանքը կանգ էր առել, ժամը երկուսի համար նախատեսված փոստատարի մեկնումը, ինչպես երևում էր, հետաձգվել էր, և նա մեկնելու էր միայն առավոտյան դեմ: Ծառայողները մռայլ դեմքերով շարունակում էին հերթապահել, բայց այս հերթապահությունը անօգուտ էր: Հյուսիսային օդանավակայաններից շարունակում էին ստացվել եղանակի վերաբերյալ տեղեկություններ: Սակայն նրանց «պայծառ երկինք», «լիալուսին» և «լիակատար հանդարտություն» բառերը առաջացնում էին մեռյալ թագավորության պատկեր: Լուսնի և քարերի մի անապատ: Մինչ Ռոբինոն աննպատակ թերթում էր թղթերը, որոնց վրա աշխատել էր բաժնի վարիչը, հանկարծ նշմարեց, որ վերջինս լկտի ժպիտով իր դիմաց կանգնած սպասում է, թե երբ կվերադարձնեն իր թղթերը, կարծես ուզում էր ասել. «Իհարկե դուք կարող եք վերադարձնեի երբ ցանկանաք, այնպես չէ՞: Բայց և այնպես դրանք իմն են...»: Ստորադրյալի այս դիրքը վիրավորեց Ռոբինոյին, բայց նա ոչինչ չկարողացավ պատասխանել և ջղայնացած մեկնեց թղթապանակը: Բաժնի վարիչը վերադարձավ իր տեղը վեհաշուք տեսքով: «Ես պետք է նրան գրողի ծոցն ուղարկեի»,– մտածեց Ռոբինոն: Պապիպանելով արտաքին վեհությունը, նա մի քանի քայլ արեց, մտածելով

տեղի ունեցած ողբերգության մասին: Այս ողբերգությունն իր հետ կբերի Ռիվիերի քաղաքականության ձախողումը, և Ռոբինոն ողբում էր այս կրկնակի սուգը:

Ապա աչքին երևաց Ռիվիերի պատկերը, առանձնացած այնտեղ, իր գրասենյակում, Ռիվիերի, որը նրան ասել էր. «բարեկամս»...երբեք մարդ արարածն այնքան կարիք չէ՝

զգացել նեցուկի: Նրա նկատմամբ Ռոբինոն խոր խզճահրություն զգաց: Նրա ուղեղում շարժվում էին զանազան անրոշ նախադասություններ, որոնցով ցանկանում էր ցավ

հայտնել և մխիթարել նրան: Ռոբինոյին համակեց մի զգացում, որ նրան գեղեցիկ թվաց և աշխուժացրեց: Այն ժամանակ նա կամաց խփեց դուռը: Չպատասխանեցին: Նա չմարձակվեց ավելի ուժեղ խփել, լուռ հրեց դուռը: Ռիվիերն այնտեղ էր: Առաջին անգամը լինելով, Ռոբինոն մտավ Ռվիերի մոտ հաստատ քայլելով, համարյա որպես բարեկամ, նա երևակայում էր, թե ինքը սերժանտ է, որ թշնամու գնդակների տակ միանում է իր վիրավոր գեներալին, ընկերաւցում նրան խառնաշփոթ փախուստի մեջ և որպես եղբայր նրա հետ միասին գնում տարագրության: «Ինչ էլ որ լինի, ես ձեզ հետ եմ», — կարծես ուզում էր ասել Ռոբինոն:

Ռիվիերը լռում էր և գլուխը կախ նայում ձեռքերին: Իսկ Ռոբինոն, կանգնած նրա առաջ, չէր համարձակվում խոսել: Վիրավոր առյուծն անգամ երկյուղ էր ազդում: Ռոբինոն պատրաստում էր ավելի մեծ անձնազոհություն արտահայտող բառեր, բայց ամեն անգամ, երբ աչքերը բարձրացնում էր, հայացքը հանդիպում էր այդ հակված գլխին, ալեխառն մազերին, անհայտ դառնությունից սեղմված այդ շրթունքներին: Վերջապես համարձակվեց.

«Պարոն դիրեկտոր...»:

Ռիվիերը բարձրացրեց գլուխը և նայեց նրան: Նա սթափվում էր այնքան խոր մտորումներից, որոնք նրան հեռուներն էին տարել, որ նույնիսկ չէր նկատել Ռոբինոյի ներկայությունը: Եվ ոչ ոք երբեք չիմացավ, թե ինչ տեսիլներ էին անցել նրա աչքերի առջևով, թե ինչ վիշտ էր համակել նրա սիրտը: Ռիվիերը նայեց Ռոբինոյին, ինչպես կենդանի վկայի, ականատես է եղել ինչ-որ դեպքի: Ռոբինոն շփոթության մեջ ընկավ: Որքան Ռիվիերը երկար էր նայում նրան, այնքան շրթունքների վրա որոշակի էր դառնում Ռոբինոյի համար անհասկանալի հեգնանքը: Արքան Ռիվիերը երկար էր

նայում Ռոբինոյին, այնքան վերջինը կարմրում էր: Եվ Ռիվիերը ավելի էր համոզվում, որ Ռոբինոն եկել է հուզիչ, բայց դժբախտաբար չմտածված ցավակցությամբ, ցուցաբերելու մարդկային հիմարությունը:

Ռոբինոն բոլորովին կորցրեց իրեն: Ե՛վ սերժանտը, և՛ գենեռալը, և՛ գնդակները, բոլորը դարձան անտեղի: Նրա համար անհասկանալի բան էր տեղի ունենում: Ռիվիերը շարունակ նայում էր նրան: Այն ժամանակ Ռոբինոն ակամա ուղղեց իր դիրքը հանեց ձեռքը ձախ գրպանից: Վերջապես Ռոբինոն անհարմարության զգացումով, ինքն էլ չհասկանալով թե ինչու, արտասանեց.

— Եկել եմ ձեր հրամաններն ստանալու:

Ռիվիերը հանեց ժամացույցը և պարզապես ասաց, «ժամը երկուսն է: Ասունսիոնի փոստատարը վայրէջք կկատարի ժամը երկուսն անց տասը րոպեին: Եվրոպայի փոստատարի մեկնելու ազդանշանը տվեք ժամը երկուսն անց տասնհինգին»:

Եվ Ռոբինոն գրասենյակում տարածեց այս տարօրինակ լուրը. գիշերային թռիչքները չէին դադարեցվում: Ռոբինոն դիմեց բաժնի վարիչին:

— Բերեք ինձ այդ թղթապանակը, ստուգելու եմ:

Երբ բաժնի վարիչը նրան մոտեցավ, Ռոբինոն ասաց.

— Սպասեցեք։

Եվ բաժնի վարիչը սպասեց։

XXII

Ասունսիոնի փոստատսրը ազդանշան տվեց, որ վայրէջք է կատարում։

Ռիվիերը այդ գիշերվա ամենածանր ժամերին իսկ մեկ առ մեկ հետևել էր

հեռագրերին, որոնք տեղեկություններ էին տալիս օդանավի հաջող ընթացքի մասին։ Այս իրարանցման մեջ դա նրա համար կրած պարտության փոխվրեժն էր, իր գործի նկատմամբ ունեցած հավատի ապացույցը։ Հեռագրերը ազդարարում էին այս երջանիկ թռիչքը, որը հազար ուրիշ նույնքան երջանիկ թռիչքներ էր գուշակում։ «Չէ՞ որ ամեն գիշեր ցիկլոններ չեն լինում»։ Ռիվիերը մտածում էր նաև. «Ճանապարհը բացված է, չի կարելի չշարունակել»։

Պատագոնիայից հանգրվան առ հանգրվան իջնելով օդանավը սահում էր, ինչպես դուրս են գալիս ծաղիկներով, ցածր տներով և հանդարտ ջրերով հարուստ հիասքանչ այգուց։ Ինքնաթիռը թռչում էր ցիկլոնի տերիտորիայից հեռու, որը չէր աղոտացնում նրա աստղերից և ոչ մեկը։ Ինը ուղևոր, փաթաթված իրենց ճանապարհորդական ծածկոցների մեջ, սեղմում էին ճակատներն իրենց կողքի պատուհանների ապակիներին, ինչպես թանկարժեք քարերով լի ցուցափեղկին գիշերվա մեջ Արգենտինայի փոքրիկ քաղաքները հաշվի հատիկների նման շարում էին իրենց ամբողջ ոսկին աստղային քաղաքների դժգույն ոսկու տակ։ Առջևում օդաչուն ձեռքերով պահում էր մարդկային կյանքի թանկարժեք բեռը այծարածի նրա լայն բացած աչքերում անդրադառնում էր լուսինը։ Բուենոս-Այրեսն արդեն լցնում էր հորիզոնը վարդագույն բոցերով և շուտով, ինչպես առասպելակ գանձ, նա կփայլեր իր բոլոր թանկագին քարերով։ Ռադիստը մատներով ուղարկում էր վերջին հեռագրերը, ինչպես սոնատի ավարտի հնչյունները, որ նա ուրախ խփում էր երկնքում, և որի մեղեդին Ռիվիերը այնքան լավ էր հասկանում, ապա վերցրեց անտենան, ճմլկռտվեց մի քիչ, հորանջեց ժպտաց. հասան։

Վայրէջք կատարելով օդաչուն հանդիպեց Եվրոպա մեկնող փոստատարի օդաչուին, որը ձեռքերը գրպաններում հենվել էր իր օդանավին։

— Դո՞ւ ես շարունակելու տանել փոստը։

--- Այո,

— Պատագոնացին արդեն այստե՞ղ է։

— Նրան չեն էլ սպասում։ Կորել է։ Եղանակը լա՞վ է։

- Շատ լավ է։ Ֆաբիենը կորե՞լ է։

Այս մասին քիչ խոսեցին։ Մեծ եղբայրության զգացումը նրանց ազատում էր ավելորդ խոսքերից։ Ասունսիոնից ստացված տոպրակները Եվրոպա մեկնող օդանավն էին տեղափախում, իսկ օդաչուն, շարունակ անշարժ կանգնած, գլուխը ետ գցած և ծոծրակը խցիկին հենած նայում էր աստղերին։ Նա զգում էր, թե ինչպես է իր մեջ ծնվում մի հսկաւական ուժ, և մի հզոր ուրախություն լցնում էր նրան։

- Բարձվա՞ծ է,— ասաց մի ձայն,— ուրեմն միացրեք։

Օդաչուն չէր շարժվում։ Գործի դրեցին մոտորը։ Ինքնաթիռին հենված օդաչուն ուսերով զգում էր օդանավի կենդանանալը։ Վերջապես բազմաթիվ սխալ լուրերից հետո,— թռչելու են... չեն թռչելու, թռչելու են,— օդաչուն կարող էր իրեն հանգիստ զգալ։ Նա բացեց բերանը, և լուսնի լույսի տակ ատամները փայլեցին, ինչպես երիտասարդ գիշատիչ գազանի ատամները։

— Ուշադրություն, գիշերը, հե յ։

Նա չէր լսում ընկերոջ խորհուրդը։ Ձեռքերը գրպաններում, գլուխը ետ գցած, դեմքը դարձրած դեպի ամպերը, լեռները, գետերն ու ծովերը, նա սկսեց լուռ ծիծավել։ Մի թեթև ծիծաղ, որը զեփյուռի նման անցնում էր նրա մարմնի միջով և սարսռեցնում նրան։ Մի թեթև ծիծաղ, որը սակայն շատ ավելի ուժեղ էր, քան այդ ամպերը, լեռները, գետերն ու ծովերը։

— Ի՞նչ է պատահել քեզ։

— Այդ հիմար Ռիվիերը, որ ինձ... Երևակայում է, որ ես վախենում եմ։

XXIII

Միրոպեից նա կանցնի Բուենոս-Այրեսը և Ռիվիերը, որ վերսկսում էր պայքարը, ուզում է լսել նրան: Լսել, թե ինչպես է ծնվում նրա հոնդյունը, սաստկանում, և նվազելով, մաում, ինչպես աստղերի միջով շարժվող քանաքի ահարկու ոտնաձայնը:

Թևերը ծալած,Ռիվիերը անցնում է քարտուղարների միջով,կանգ առնում պատուհանի առաջ,ականջ դնում ու խորհում;

Եթե նա հետաձգեր թեկուզ մի մեկնում, գիշերային թռիչքների գործը կարելի էր կորած համարել: Բայց առաջ ընկնելով թույլերից, որոնք վաղը կհրաժարվեն նրանից, Ռիվիերը գիշերվա մեջ բաց թողեց մի ուրիշ անձնակազմ:

Հաղթանակ,պարտություն, սրանք բառեր են,որոնք զուրկ են իմաստից: Կյաննքը այս պատկերների ներքևում է,նա արդեն պատրաստում է նոր պատկերներ: Հաղթանակը թուլացնում է ժողովրդին,իսկ պարտությունը նրա մեջ արթնացնում է նոր ուժեր: Պարտությունը ,որ կրեց Ռիվիերը,թերևս,մի գրավական է, որը, նրան մոտեցնում է իսկական հաղթանակին: Միայն դեպքերի զարգացումը պետք է հաշվի առնել:

Հինգ րոպեում ռադիստները ոտքի կհանեն բոլոր օդանավակայանները, տասնհինգ հազար կիլոմետրի վրա կայնքի սարսուռը կլուծի բոլոր խնդիրները:

Արդեն օդանավը երգեհոնի հնչյունների նման օդ է բարձրանում: Եվ անցնելով քարտուղարների միջով, որոնք կուչ են գալիս նրա խիստ հայացքի տակ, դանդաղ քայլելով իր աշխատասենյակ է վերադառնում Ռիվիերը: Ռիվիեր մեծը,Ռիվիեր հաղթողը, որը կրում է իր դժվարին հաղթանակի բեռը: